

**ԱՐՄԵՆ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ.
 «ՈՐԵՒԷ ԿԵՏՈՎ ՈՐԵՒԷ
 ԼՈՒՐՋ ԱՌԱՋՆԹԱՅ
 ԶԿԱՅ»**

Հայաստանի Մարդու իրաւունքներու պաշտպան Արմէն Յարութիւնեան յայտարարեց, որ ամբողջութեամբ կը կիսէ Եւրախորհուրդի Մարդու իրաւունքներու յանձնակատար Թոմաս Համմարբերգի՝ անցեալ շաբաթ հրապարակած գեկոյցին մէջ հնչեցուցած մտահոգութիւնները:

«Զեկոյցում կարծիք թելով մենք տեսնում ենք մտահոգութիւն», - «Ազատութիւն» ռատիոկայանի հետ հարցազրոյցի ընթացքին ըսած է Հայաստանի Մարդու իրաւունքներու պաշտպանը: «Միակ, այսպէս ասենք՝ լուսաւոր կէտը այդտեղ նա է, որ Հայաստանի իշխանութիւնները պրոակտիւ գործունէութիւն են ցուցաբերել, որպէսզի փաստահաւաք այդ խումբը ստեղծուի: Ըստ էութեան մնացած բոլոր հարցերի մասով մտահոգութիւնը մնացել է նոյն մակարդակի եւ չլուծուած խնդիրները շատ աւելի շատ են, քան լուծուած խնդիրները»:

Յարութիւնեան ընդգծեց նաեւ Համմարբերգի մտահոգութիւնը, որ յետընտրական 19 գործերով մեղադրանքի հիմքը կազմած է ոստիկաններու ցուցմունքը:

Շաբ.ը էջ 4

**ԻՇԽԱՆՈՒԹԻՆՆԵՐՈՒ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ ՄԱՅ ՕԴԻՆ ՄԷՋ
 ԶԱԶԱՐԱԲՈՐՆԵՐ ԶԱՒՔՈՒԵՑԱՆ ԶԻՄԻՍԱՅԻՆ ՊՈՂՈՏԱՅԻ ԿՐԱՅ**

Ազատութեան հրապարակը եւ ապա Մատենադարանի տարածքը փակուելէ ետք, Հայաստանի ընդդիմադրութիւնը իր հերթական հանրահաւաքը տեղափոխեց Հիւսիսային պողոտայ: Սեպտեմբեր 26-ին կայացած հաւաքը ընդհանրապէս նուիրուած էր Կեղրոնի թաղապետի ընտրութիւններուն, որուն Հայ Ազգային Գոնկրէսի անունով կը մասնակցէր ՀՀ ղեկավար Արարատ Զուրաբեանը: Հանրահաւաքը վարող Արամ Մանուկեան, որ հազարաւոր ներկաներուն դիմեց որպէս՝ «Հայաստանի ազատ քաղաքացիներ, Հիւսիսային պողոտայի տէրեր, Հայ Ազգային Գոնկրէսի անդամներ»: Ան ներկաներուն վստահեցուց, որ այն խօսակցութիւնները, թէ համաժողովրդային շարժումը սկսած է մարիլ, իրականութեան չեն համապատասխաներ եւ այս շարժումը չի կրնար մարիլ, քանի որ կազմուած է, յաղթած եւ վստահ մարդոցմէ:

Արամ Մանուկեանին յաջորդեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան ատենապետ Լիւդմիլա Սարգսեան: «Եթէ դուք մեր հաւաքատեղիները սահմանափակում էք, մեզ թոյլ չէք տալիս ուզած տեղերում հանրահաւաք անել, դրանով մեծացնում էք հիասթափու-



Հազարաւոր ժողովուրդ՝ հմախմբուած եիւսիսային պողոտայի վրայ

թիւնը ժողովրդի՝ ձեր նկատմամբ», - խօսքը ուղղելով իշխանութիւններուն ըսաւ Լիւդմիլա Սարգսեան: «Ինչ վերաբերում է Մատենադարանին եւ Ազատութեան Հրապարակին, ապա իշխանութիւնները գուր են կարծում, որ մեզանից խլելով մեր հաւաքատեղիները՝ կարող են կոտրել մեր կամքը կամ Շարժման ողնաշարը. մեր շար-

ժումը օր օրի հզօրանում է: Հայաստանը փոքր է, բայց մենք միշտ հաւաքուելու տեղ կը գտնենք, մինչեւ մեր վերջնական յաղթական վերջակէտը չզննենք», ըսաւ ընկերուհի Սարգսեան:

Համաժողովրդական շարժման մէկ այլ ներկայացուցիչ Դաւիթ

Շաբ.ը էջ 5

**«ՅՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԶԱՄԱՐ ՇԱՏ
 ՄՏԱՅՈՒՉ ԽՆԴԻՐ Է ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ
 ԶԱՄԱՋԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԹՐՔԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿԻՆ»**

Հոկտեմբեր 1-ին «Հայեացք» Ակումբէն ներս տեղի ունեցած ասուլիս ընթացքին ՍԴՀԿ Հայաստանի վարչութեան ատենապետ Լիւդմիլա Սարգսեան անգամ մը եւս շեշտեց որ, Հնչակեան Կուսակցութեան համար շատ մտահոգիչ խնդիր է Սերժ Սարգսեանի համաձայնութիւնը Թրքական առաջարկին՝ պատմաբաններու յանձնախումբ ստեղծելու վերաբերեալ: «Դրանով կասկածի տակ առնելով ցեղասպանութեան փաստը, թէեւ այն չի ընդունուել, սակայն չի բացառուում, որ մօտ ապագայում այն կրկին կը դրուի սեղանի վրայ»:



Լիւդմիլա Սարգսեան անցեալ շաբաթ Հիւսիսային պողոտայի վրայ տեղի ունեցած հանրահաւաքի ընթացքին

Ինչ կը վերաբերի Հայ-թրքական սահմանի բացման, Լիւդմիլա Սարգսեան յայտարարեց որ, ժամանակը դեռ չէ եկած, քանի որ հայ գործարարները պաշտպանուած չեն աժան ու անորակ թրքական ապրանքներու՝ Հայաստան ներմուծումէն, որու պատճառով մեծապէս կը տուժեն մանր գործարարները: Ան առաջարկեց, սահմանը բանալէ առաջ համապատասխան օրէնքներով պաշտպանել անոնց շահերը:

«Դրանք լուրջ խնդիրներ են,

որոնց մասին պետք է յաւուր պատշաճի մտածել ու օրէնքով ամրագրել այս խնդիրների լուծումները»:

Լ. Սարգսեանի խօսքերով, այսօր եթէ բացուի սահմանը, ապա կրնայ այն պայմանաւորուած ըլլալ միայն Ղարաբաղի ազատագրուած տարածքներու յանձնումով: «Այսինքն եթէ մի բան ձեռք ենք բերելու, ապա շատ աւելին կորցնելու ենք: Արդեօք դա մեզ անհրաժեշտ է», հարց տուաւ ընկերուհի Սարգսեան:

Շաբ.ը էջ 4

**ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԿ
 ՍՐԲԱԼՈՅՍ ՍԻՒՌՈՆԻ ՕՐՅՆՈՒԹԻՒՆ**

Սեպտեմբերի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցաւ 21-րդ դարի երկրորդ Միւռնոսօրհնէքը:

«Վարդապէտ Ս. Խաչի տօնի առաւօտեան, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մայրապօրջի Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ ներկայութեամբ Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Ամենապրբութիւն Բարդուղիմէոս Ա-ի եւ Միւռնոսօրհնութեան առիթով Սուրբ Էջմիածին ժամանած թեմակալ առաջնորդների, ազգային բարերարների, քոյր եկեղեցիների ներկայացուցիչների, ուխտաւոր բազմահազար հայրդիների հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեց Միւռնոսէջ Մայր Տաճարում: Պատարագիչն էր Յունաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Ռսկան արքեպիսկոպոս Գալիաքեանը: Յընթացս Ս. Պատարագի Սրբազան Հայրը յաւուր պատշաճի քարոզ խօսեց:



Ամենայն Հայոց Կաթողիկոսը Միւռնոսի կաթսայի առջեւ աղօթքի պահում

Ս. Պատարագի աւարտին Միւռնոնի կաթսայի առջեւ կատարուեց ձիթախաղի օրհնութեան վերջին

աղօթքը, որից յետոյ Մայր Տաճարի զանգերի զողանջների, ինչպէս նաեւ սաղմոսների եւ շարականների երգեցողութեան ներքոյ Սրբա-

Շաբ.ը էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԱՍՈՒՒ

ԹՈՒՐԲԻԱՅԻ ԾԱՆԱՊԱՐՅՈՒ ԶԱՅԱՍՏԱՆԻՆ ՏԱՆՈՒՄ Է ՈՉ ԹԵ ԱՐԵՒՄՈՒՏՔ, ԱՅՆ ՄԱՅՐԱՍՈՒՏ

Միացեալ Նահանգներում հայկական համայնքի ներկայացուցիչներին հետ ունեցած ելույթի ընթացքում Սերժ Սարգսեանը յայտարարել էր, թէ Ղարաբաղի հակամարտութեան գործընթացում Թուրքիայի միջնորդութեան մասին խօսք չկայ, այլ ինչորք Թուրքիայի օժանդակութիւնն է, որից, ինչպէս ցանկացած օժանդակութիւնից, Հայաստանը չպէտք է հրաժարուի: Սակայն հետաքրքրականն այն է, որ Թուրքիայի օժանդակութիւնը չզիտես ինչու ուղղուած է Հայաստանի, ոչ թէ Ադրբեջանի դիրքորոշումը փոխելուն: Մինչդեռ տրամաբանութիւնը յուշում էր, որ Թուրքիան պէտք է Ադրբեջանի դիրքորոշման մեղմացման հարցին օժանդակէր: Այդ պարագայում, նոյնիսկ ինչ որ առումով հասկանալի կը լինէր, թէ ինչու է Սերժ Սարգսեանը գիշման գնում այսպէս կոչուած հայկական հարցի առումով: Ասենք Սերժ Սարգսեանը մեղմացում է Հայաստանի կարծր պահանջատիրական կեցուածքը, փոխարէնը դրա դիմաց ստանալով Ղարաբաղի հարցում Ադրբեջանի կարծր դիրքորոշման մեղմացմանն ուղղուած Թուրքիայի ջանքի համաձայնութիւն:

Բայց յանկարծ հնչեց Մեթիւ Բրայզայի հերթական «տարօրինակ» միտքը, որից պարզ դարձաւ, թէ «Թուրքիան կ'օգնի Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցում ճկունացնել Հայաստանի դիրքորոշումը»: Դա արդէն բաւական լուրջ հիմք է մտահոգուելու համար, թէ այդ ինչով է, կամ ինչպէս, որ Թուրքիան օգնեւոր է Հայաստանին ճկունացնել իր դիրքորոշումը Ղարաբաղի հարցում: Եւ ինչ է նշանակում ճկունացնել Հայաստանի դիրքորոշումը: Ըստ երեւոյթի, դա նշանակում է, որ հայ-թուրքական յարաբերութիւնը բարելաւելու համար, Հայաստանը շատ աւելի գիշորական կեցուածք կ'ունենայ Ղարա-

բաղի հարցում: Այլ բան դժուար է հասկանալ ճկունացում ձեւակերպման տակ, առաւել եւս, որ Հայաստանի արտաքին գործերի նախարարութիւնը, եւ ընդհանրապէս պաշտօնական երեւանը, այդպէս էլ որեւէ մի բառ բացատրութիւն չտուեց այն գրոցի հետ կպուած, որ Ղարաբաղի հարցի թեմայով ունեցել էին երեւանում Աբղուլլահ Գիւլն ու Սերժ Սարգսեանը: Մինչդեռ Գիւլը հետագայ յայտարարութիւններով ցոյց էր տուել, թէ ինչքան է կարողացել «ձկել» Սերժ Սարգսեանի դիրքորոշումը: Պաշտօնական երեւանն այդ յայտարարութիւններից որեւէ մէկն առ աչսօր համարժէք չէ մեկնաբանել:

Աւելին, արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդեանի իբրեւ թէ մեկնաբանելով Մեթիւ Բրայզայի այն խօսքը, թէ Թուրքիան կ'օգնի ճկունացնել Հայաստանի դիրքորոշումը Ղարաբաղի հարցում, տուել էր ուղղակի դիւանա-

ուարդ Նալբանդեանն էլ Բրայզայի խօսքը համարելով շփոթութիւն, չզիտես ինչու չի յորդորում նրան ուղղել իր սխալը, որպէսզի հայ հասարակութիւնը չընկնի թիւրիմացութեան մէջ: Միւս կողմից սակայն, թերեւս, էդուարդ Նալբանդեանի, ինչպէս որ ցանկացած հայ բարձրաստիճան պաշտօնեայի, գուցէ թէ վերջն էլ չէ, թէ ինչի մէջ կ'ընկնի հայ հասարակութիւնն ընդհանրապէս: Առաւել եւս, որ հայ հասարակութիւնն էլ չզիտես ինչու բացարձակապէս անտարբեր է Ղարաբաղի հարցի շուրջ տեղի ունեցող անցուղարձին:

Մինչդեռ Բրայզայի յայտարարութիւնը եւ դրան պաշտօնական երեւանի կիսաձայն եւ կիսատարձայնքը փաստացի վկայում են, թէ ինչ ուղղութեամբ է Թուրքիայի օժանդակութիւնը Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորմանը: Հետեւեալ բարձր մտածողութիւնն այդ հարցում դառ-

Յանկարծ հնչեց Մեթիւ Բրայզայի հերթական «տարօրինակ» միտքը, որից պարզ դարձաւ, թէ «Թուրքիան կ'օգնի Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցում ճկունացնել Հայաստանի դիրքորոշումը»

դիտական կլասիցիզմի լաւագոյն նմուշների շարքին դասուելու արժանի պատասխան: Նա, այսինքն մեր արտաքին գործերի նախարարը, ասել էր, թէ Մեթիւ Բրայզան հաւանաբար շփոթել է եւ Ադրբեջանի փոխարէն ասել է Հայաստան: Դրանից յետոյ իհարկէ Մեթիւ Բրայզան ներողութիւն չի խնդրել իր որեւէ շփոթութեան համար: Իհարկէ, եղածը մի մեծ բան էլ չէ, բայց Բրայզան գոնէ կարող էր ասել, որ ինքը շփոթուել է, քանի որ նա իբրեւ փորձուած դիւանագետ պէտք է հասկանայ, թէ տուեալ պարագայի իր շփոթութիւնն ինչպիսի լուրջ քաղաքական յայտարարութիւն է ստացուած: Սակայն Բրայզան դա չի անում, իսկ էդ-

նում է բաւական մտահոգիչ: Եթէ Հայաստանի իշխանութիւնը չի գտնում հայ-թուրքական յարաբերութեան կարգաւորման այլ տարբերակ, քան Ղարաբաղի հարցում գիշման գնալը, ապա թերեւս այդ կարգաւորումը բացում է ոչ թէ հայկական պետականութեան առաջընթացի, այլ նահանջի ճանապարհը, եւ Թուրքիայի ճանապարհը Հայաստանին տանում է ոչ թէ Արեւմուտք, այլ մայրամուտ:

Այնպէս որ, թերեւս էականն այն չէ՝ Թուրքիան միջնորդութիւն թէ օժանդակութիւն է իրականացնում Ղարաբաղի հարցում: Էականն այն է, թէ Թուրքիան ում է այդ հարցում օժանդակում: Իսկ տուեալ պարագայում ստացուած է,

որ Թուրքիան օժանդակում է Ադրբեջանին: Սրա շնորհիւ միգուցէ կարգաւորուի հայ-թուրքական յարաբերութիւնը: Սակայն խնդիրն այժմ այն է, թէ հայ հասարակութիւնը, հայկական պետութիւնը, հայ հասարակական-քաղաքական միտքն ընդհանրապէս, ինչն է համարում առաջնայինը՝ Ղարաբաղի հարցը, թէ հայ-թուրքական յարաբերութիւնը: Միգուցէ շատ պարզունակ է այդ հարցերը դնել համեմատութեան մէջ: Սակայն իրավիճակն այսօր կարծես թէ այնպիսին է, որ առաջացել է այդ երկու հարցերի մէջ առաջնահերթը եւ կարեւորագոյնն ընտրելու անհրաժեշտութիւն՝ հայ-թուրքականի համար գիշելը Ղարաբաղի դէպքում, թէ Ղարաբաղի համար գոհել հայ-թուրքականը: Բանն այն է, որ Հայաստանի ներկայիս իշխանութիւնը կարծես թէ խնդրը տեղաւորել է հենց այդ կամ-կամի շրջանակում, ըստ երեւոյթի կանգնած լինելով սեփական իշխանութեան կամ-կամի փաստի առաջ: Մինչդեռ այդ հարցերը Հայաստան պետութեան ապագայի համար, ըստ ամենայնի, ունենալու են վճռորոշ, թերեւս ճակատագրական ազդեցութիւն: Միգուցէ հասարակական-քաղաքական միտքը գտնում է, կամ ունի տարբերակ, որը հնարաւորութիւն է տալիս խնդիրը աւելի լայն դիտարկելով դուրս բերել կամ-կամի շրջանակից: Այդ դէպքում սակայն պէտք է հասարակութիւնն ու քաղաքական հանրոյթը տէր կանգնի իր այդ մտքին եւ թոյլ չտայ, որ իշխանութիւնը սահմանափակի ընտրութեան հնարաւորութիւնն ու գործողութիւնների սահմանը:

ՅԱԿՈՒ ԲԱԴԱԼԵԱՆ «ԼՐԱԳԻՐ»

ԵԹԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Վերջերս Ազգային ժողովը հապճեպ եւ անորակ օրէնք է ընդունել, որի իսկական անուանումը պէտք է լինի՝ «Օրէնք՝ «Ա1+ե-ը եթեր չթողնելու մասին»: Օրէնքի «կնքահայրն» է նախարար Ներսէս Երիցեանը, որը միանգամայն արժանի է «Ամալեան -2» «պատուածոր» կոչմանը: Ինչպէս Ամալեանն է 6 տարի շարունակ հեքիաթներ պատմում «արդար մրցոյթների» մասին, այդպէս էլ Երիցեանն է մէջտեղ բերել «թուլացման» առասպելը: Այդ հեքիաթներին ոչ ոք, իհարկէ, չի հաւատում, ներառեալ Ամալեանն ու Երիցեանը, որոնք օժտուած են բաւականաչափ ինտելեկտով՝ հասկանալու համար, թէ ինչ են անում, սակայն, միւս կողմից, նրանց ցինիզմի աստիճանը բաւարար է՝ քաղաքական որոշումներն «իրաւական» եւ «տեխնիկական» արդարացումներով քողարկելու համար:

Արդիւնքում տուժում է հեռուստադիտողը, հասարակութիւնը: Միացրէք հեռուստացոյցը երեկոյեան («փրայմ-թայմի») ժամերին եւ կոճակները հերթականութեամբ սեղմելով՝ դուք կը տեսնէք տարբեր հեռուստաալիքների լրատուական նոյն թողարկումները, որոնցից կէսից աւելին զբա-

ղեցնում է տեղեկատուութիւնն այն մասին, որ նախագահն ընդունեց այսինչին, հանդիպեց այսինչի հետ, այցելեց այսինչ կամ այսինչ հիմնարկը: Նոյն գործողութիւնները եթերում կատարում է, բնականաբար, նաեւ վարչապետը, որի ընդունելութիւններն ու այցելու թիւները երբեմն համեմուտ են բաւականին հետաքրքիր դասախօսութիւններով: Միեւնոյն տեսանիւթերը տարբեր ալիքներով «պատեցնելը» լրագրողական որեւէ անհրաժեշտութեամբ չի հիմնաւորում (դրանք խիստ «ոչ էքսկլիւզիվ» նիւթեր են)՝ դա պարզապէս պարտադրանք է, որից խուսափելը կարող է խնդիրների առաջ կանգնեցնել հեռուստաընկերութիւնների տէրերին:

Բացի այդ «սիւնական երկուորեակներ» հանդիսացող լրատուական թողարկումներից, ցոյց են տրուում նաեւ ֆիլմեր եւ հեռուստասերիալներ: (Չնչին բացառութիւն է կազմում «Հայրենիքը»՝ իր դասական համերգներով, բայց ընդհանուր «եթերային պատկերում» դա եղանակ չի ստեղծում): Ֆիլմերը հիմնականում արդէն մի քանի անգամ՝ տարիներ շարունակ եթերում եղած նոյն կինոնկարներն են: Բայց դա էլ

ոչինչ. եթէ նոյնիսկ նորմալ ֆիլմ է ցուցադրուում, այն իւրաքանչիւր 15-20 րոպէն մէկ ընդհատում է մօտ 10 րոպէանոց գովազդային բլոկով, ինչի շնորհիւ այդ կինոնկարը նայել իսկական տանջանք է դառնում:

Դէ, իսկ սերիալների վերաբերեալ ամէն ինչ պարզ է: Եթէ ուզում էք ծանօթանալ գող, աւազակ, մարդասպան, մաֆիոզ լինելու «ռոմանտիկային», ապա համեցէք հայկական եթեր: Ոչ մէկի մտքով չի անցնում սերիալ նկարահանել, ասենք, ջութակահարի կամ գիտաշխատողի մասին, որովհետեւ նրանք ամէն րոպէ քիթում ունեն ջարդելու եւ երեք յարկանի ուշուց չեն տալու: Իսկ մեր հեռուստադիտողին, հաւանաբար, հենց ջարդելն ու հայտնելն է պէտք: Աւելի ճիշդ, նրան սովորեցրել են հենց այդպիսի «արուեստի»:

Ճարդ կտրած՝ անցնում եւ ուսուսական ալիքներին եւ այնտեղից իմանում եւ, թէ ինչով են այսօր զբաղուել Մեղվեղենն ու Պոտիւնը, եւ ինչպէս են ապրում ուսու բանդիտները:

ԱՐԱՄ ԱՐԱՀԱՄԵԱՆ «ԱՌԱՒՕՏ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ՝ ՊԱՇՏՆԱԹԵՐԹ՝ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Շրջանի ԽՍԲԱԳԻՐ՝ SOPEA ԱՐՇԱԿ ՂԱՋԱՆԵԱՆ ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ ՊԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ ՍԱՀԱԿ ԹՈՒԹԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ Գեղ. (626) 797-7680 Ֆաքս. (626)797- 6863 E:Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail) Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ՐԱՅԱՍՏԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԿԵՂՃ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՅԱՂԹԵԼ ԵՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈ»:
Երեւանի Կենտրոն եւ Նոր Նորք համայնքներում կիրակի օրը անցկացուած ընտրութիւնների նախնական արդիւնքներով, վերընտրուել են գործող թաղապետները՝ հանրապետականներ Գաղիկ Բեգլարեանը եւ Դաւիթ Պետրոսեանը:

Համաձայն Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի հրատարակած նախնական արդիւնքների՝ Կենտրոնում քուէարկութեանը մասնակցած 31691 ընտրողներից Գաղիկ Բեգլարեանի օգտին քուէարկել են 22369-ը, ընդդիմութեան թեկնածուի՝ Հայոց Համագրային Շարժման վարչութեան նախագահ Արարատ Զուրաբեանի օգտին՝ 8085-ը, անվաւեր քուէաթերթիկների թիւը 1117 է:

Նոր Նորք համայնքում, ըստ Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի տրամադրած նախնական արդիւնքների, քուէարկութեանը մասնակցած 29395 ընտրողներից գործող թաղապետ Դաւիթ Պետրոսեանի օգտին քուէարկել են 16913-ը, իսկ նրա մրցակից՝ նոյնպէս հանրապետական Մելիք Գասպարեանի օգտին՝ 10982-ը, անվաւեր քուէաթերթիկների թիւը 1479 է:

«Ազատութիւն» ռադիոկայանի լրագրողը, օրուայ ընթացքում այցելելով Կենտրոն համայնքը ընդգրկող թիւ 10 ընտրատարածքի 7 տեղամաս, գրեթէ բոլոր տեղամասերի մօտ մարդկանց եւ ավտոմեքենաների կուտակումների ակնատես եղաւ, ընդ որում՝ ոչ ոստիկանները եւ ոչ էլ ընտրական յանձնաժողովների նախագահները միջոցներ չէին ձեռնարկում կուտակումները վերացնելու ուղղութեամբ:

Ընտրական տեղամասերը տեղակայուած էին հիմնականում դպրոցներում եւ մանկապարտէզներում՝ իւրաքանչիւրում մէկից աւելի տեղամաս: Եւ վստահուած անձինք պնդում էին, թէ ընտրողները հեշտութեամբ մուտքից մուտք, տեղամասից տեղամաս էին մտնում քուէարկութեան:

Մասնաւորապէս, թիւ 10/30 տեղամասում «Թրանսփերենսի ինթերնէշնըլ» հակակոռուպցիոն կենտրոնից դիտորդ Սոնա Ալվազեանը «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց. - «Դրսում խմբուած մարդիկ կային, եւ երկրորդ հարկի անցումով մասնաշէնքից մասնաշէնք տարբեր մարդիկ են վազվզում այս կողմ-այն կողմ: Երբ փորձեցինք լուսանկարել՝ նրանք վերցրեցին ապարատը, միջի ժապաւէնը հանեցին եւ

ապարատը ինչ-որ ժամանակ անց վերադարձրեցին՝ հայտնաբերելով: Այստեղ ոստիկանները ընդհանրապէս չեն վերահսկում, նախագահը պարզապէս չի դիմել ոստիկաններին: Նախագահին ենք ասել, նախագահը տեղեակ է»:

Յանձնաժողովի նախագահներին վերաբերմունքից դժգոհեցին մի շարք այլ տեղամասերում աւագանու անդամների թեկնածուներին վստահուած անձինք:

Մի քանի տեղամասում, յատկապէս՝ թիւ 10/06, 10/07, 10/09, 10/52, քուէախցիկներում երկուական հոգի էին քուէարկում: Մէկի համար պատճառաբանեցին, թէ լաւ էր տեսնում, միւսի համար՝ թէ լաւ չգիտէ, թէ ինչպէս պէտք է քուէարկի, մէկ այլ դէպքում յանձնաժողովի անդամները յայտարարում էին, թէ քուէարկողները ամուսիններ են:

Արարատ Զուրաբեանի ընտրական շտաբի աշխատանքները համակարգող Նաչատուր Քոքոբէլեանը երեկոյան «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնեց, որ ժամը 17:00-ի դրութեամբ արդէն աւելի քան 50 կոպիտ խախտում են արձանագրել. - «10/51, 10/52, 10/53 տեղամասերում ամենաբռնի դէպքերն են գրանցուել, այսինքն՝ վստահուած անձերին եւ նոյնիսկ յանձնաժողովի անդամին՝ «Ժառանգութեան» ներկայացուցչին, բռնի կերպով դուրս են հանել, եւ Կենտրոնական Ընտրական Յանձնաժողովի անդամ Յովսէփ Խուրշուդեանի ներկայութեամբ տեղի է ունեցել լցոնում: Դա արձանագրուել է, յանձնաժողովը այդ արձանագրութիւնը չի վերցրել, մենք ընտրատարած քայլին յանձնաժողով ենք ներկայացնելու, այնուհետեւ կը ներկայացնենք Կենտրոնական Ընտրական Յանձնաժողով: Նոյն տիպի կոպիտ խախտումներ տեղի են ունեցել թիւ 10/33, 10/29, 10/30, 10/31 տեղամասերում, եւ 10/32, 10/33 տեղամասերում լրագրողներին արգելել են մտնել տեղամասի տարածք»:

Կենտրոնական ընտրական յանձնաժողովի անդամ, «Ժառանգութիւն» կուսակցութեան ներկայացուցիչ Յովսէփ Խուրշուդեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոյցում յայտարարեց, թէ «այն, ինչ տեղի ունեցաւ 10/52 ընտրական տեղամասում, որը գտնուում է Կիլիկիայում, այլ կերպ, քան կրիմինալ յեղափոխութիւն, ես որակել չեմ կարող»: Խուրշուդեանի բնորոշմամբ՝ նման «խայտառակ» ընտրութիւնների ինքը երբեւէ ականատես չի եղել:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՅ ԸՆՏՐՈՒԵՑ ՀՈՎԻԿ ԱՐԱՅԱՍԵԱՆԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈ»:
Հայաստանի Ազգային ժողովի նախագահ ընտրուեց Յովիկ Աբրահամեանը: Ժամանակաւոր հաշուիչ յանձնաժողովի հրատարակած արդիւնքներով՝ այսօր անցկացուած փակ, գաղտնի քուէարկութեանը մասնակցած 115 պատգամաւորներից Հովիկ Աբրահամեանին օգտին ձայն են տուել 110-ը, Լարիսա Ալավերդեանի օգտին՝ 5-ը:

Նախկին փոխվարչապետ եւ Հայաստանի նախագահի աշխատակազմի նախկին ղեկավար Հովիկ Աբրահամեանին առաջադրել էր իշխող Հանրապետական կուսակցութեան խորհրդարանական խմբակցութիւնը:

Հայաստանի մարդու իրաւունքների նախկին պաշտպան Լարիսա Ալավերդեանն առաջադրուել էր խորհրդարանական միակ ընդդիմադիր «Ժառանգութիւն» խմբակցութիւնից: Նրա օգտին քուէարկել են «Ժառանգութեան» պատգամաւորները:

Ազգային ժողովի նախկին նախագահ Տիգրան Թորոսեանը հրա-



Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամեան

ժարական է տուել Սեպտեմբերի 19-ին, իսկ անցած ուրբաթ օրը կրկին է հրաժարականը, ինչով այն ընդունուած է համարուել:

Աւելի վաղ Հանրապետական կուսակցութիւնը աննպատակաբար մար էր համարել նրա պաշտօնավարումը որպէս Ազգային ժողովի նախագահ եւ այդ պաշտօնում առաջարկել էր Հովիկ Աբրահամեանի թեկնածութիւնը:

ՍՈՒՐԵՆ ԱՐԱՅԱՍԵԱՆ. «ՍԱՐՏԻ 1»-Ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ ՑԻՆԻԿ ՇՈՒՒ ԷՐ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈ»:
«Ցինիկ շուռ» որակեց Մարտի 1-2-ի իրադարձութիւններն ուսումնասիրող խորհրդարանական ժամանակաւոր յանձնաժողովի ուրբաթ օրուայ նիստը նոյն դէպքերի ուսումնասիրման նպատակով ընդդիմութեան ստեղծած հասարակական յանձնախմբի ղեկավար, «Հանրապետութիւն» կուսակցութեան քաղխորհրդի անդամ, Հայաստանի ներքին գործերի նախկին նախարար Սուրէն Աբրահամեանը:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ հարցազրոյցում Աբրահամեանը անհեթեթութիւն համարեց նիստի ժամանակ Հայաստանի գլխաւոր դատաբժիշկ Շոթա Վարդանեանի արած յայտարարութիւնը, թէ Մարտի 1-ի իրադարձութիւնների վերաբերեալ ընդդիմութեան տարածած տեսանկյանի փորձաքննութեամբ պարզուել է, որ դրանում պատկերուած մարմնի մասերը ոչ թէ մարդու են պատկանում, այլ կենդանու. - «Ինչ է, նրա մօտ ԴՆԹ-ի անալիզները կային»:

Իսկ Յատուկ քննական ծառայութեան աւագ քննիչ Վահագն Յարութիւնեանի այն յայտարարութեան առնչութեամբ, թէ տեսաժապաւէնում պատկերուած պատի վրայի հետքերը արիւն չեն, այլ ինչ-որ նիւթի մնացորդներ, Սուրէն Աբրահամեանն ընդգծեց, որ ընդդիմութիւնը այդ տեսանկյանում օգտագործել է հենց ոստիկանութեան կողմից, որոնցից մէկում պատը հետքերով է պատուած, միւսում արդէն մաքրուած է:

Ազգային ժողովի ժամանակաւոր յանձնաժողովի վերջին նիստում անդրադարձ էր կատարուել նաեւ ընդդիմութեան տարածած տեսանկյանի այն կողմին, որտեղ վրաբերի են ենթարկում մի քաղաքացու, եւ Յատուկ քննչական ծառայութեան ղեկավար Վահագն Յարութիւնեանը յայտարարել էր, թէ վրաբերի են ենթարկողը ոստիկան չէ, թէ եւ նրա ինքնութիւնը պարզուած չէ: Սուրէն Աբրահամեանը տարօրինակ համարեց, որ

աւագ քննիչը նման եզրայանգման է եկել, երբ պարզ չէ վրաբերթ անողի ինքնութիւնը. - «Պատժէ՞ք այդ կարգի ցուցարարին. եթէ դուք գիտէք, որ ցուցարար էր՝ ուրեմն, կարող էք եւ նրան պատժել»:

«Զեմ ուզում ուղղորդել նախաքննական մարմնին, բայց նման անհեթեթ վնասատականներ, ինքնապաշտպանական այդպիսի կատաղի մոլուցք՝ ինձ համար ուղղակի անհասկանալի էր», - ասաց Աբրահամեանը՝ ամփոփելով. - «Անկեղծ ասած, այդ աստիճանի շուռ, այն էլ՝ մարդու կեանքին, այս երկրի ապագային վերաբերող հարցերի վերաբերեալ ցինիկ մոլորաբանութեամբ շուռ, վաղուց չէի տեսել, եւ ես համոզուած ասում եմ, որ Սամուէլ Նիկոնեանը իր այդ ներկայացմամբ վերջնականապէս թաղեց ամբողջ այդ ժամանակաւոր յանձնախմբի հեղինակութիւնը»:

Մարտի 1-ի իրադարձութիւններն ուսումնասիրող խորհրդարանական ժամանակաւոր յանձնաժողովի նախագահ Սամուէլ Նիկոնեանը, մինչդեռ, «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոյցում ասաց, որ իրենք այդ տեսանկյանի վերաբերեալ ղեռուս որեւէ եզրակացութիւն չեն արել, եւ քանի ղեռ իրենք չունեն փորձաքննութեան արդիւնքները, ապա յանձնաժողովի նիստի ժամանակ արուած բոլոր այդ պնդումներն իր համար ընդամենը յայտարարութիւններ են եւ հիմք հանդիսանալ չեն կարող:

«Երբ յանձնաժողովին ներկայացնեն արդէն փորձագիտական եզրակացութիւն՝ ստորագրուած, հաստատուած, այդ ժամանաժողովը կարող է ընդունել որպէս հիմք: Բայց այս պահին ես չունեմ: Իրենք խոստացել են, որ դա կը ներկայացնեն մէկ շաբաթից», - ասաց Նիկոնեանը:

Նա վստահեցրեց, որ հաշուի կ'առնուեն ոչ թէ մէկ, այլ բազմաթիւ մասնագէտների տեսակէտները՝ ինչպէս հայաստանցի, այնպէս էլ միջազգային փորձագէտների:

ՐԱՖՖԻ ՅՈՎՅԱՆՆԻՍԵԱՆԸ ՉԻ ԲԱՅԱՌՈՒՄ, ՈՐ ԱՐՏԱՅԵՐԹ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱՌՆԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՇՏԿԵԼՈՒ «ՄԻԱԿ ՁԵՒԸ»

Ազգային ժողովի «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր, Հայաստանի առաջին արտգործնախարար, Եւրախորհրդի խորհրդարանական վեհաժողովում (ԵՄԽՎ) հայաստանեան պատուիրակութեան անդամ Րաֆֆի Յովհաննիսեանի կարծիքով, եթէ «առաջիկայ ամիսները նոյնպէս անցեալի շարունակութիւնն են ստակ... արտահերթ ընտրութիւնը կը դառնայ միակ ձեւը նոր վիճակ, համագործակցութեան եւ համերաշխութեան նոր մանրակերտ բերելու եւ Հայաստանի եւ իր ազգային շահի նոր հեռանկար եւ նոր շունչ հաղորդելու համար»:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ հեռախոսազրոյցում հարցին, թէ անհրաժեշտ համարո՞ւմ է երկրում իրավիճակը շտկելու համար արտահերթ համապետական ընտրութիւնների անցկացումը, «Ժառանգութիւն» կուսակցութեան հիմնադիրը պատասխանեց. - «Այս ամիսների ընթացքում երբեք չեմ դիտարկել դա որպէս հրամայական՝ յոյս ունենալով, որ երկխօսութեան եւ ներքաղաքական նոր մշակույթի իրացման միջոցով մենք կարող ենք հասնել ներհասարակական նոր լուծումների»:

ԼՈՒՐԵՐ

ՆԻԻ ԵՈՐՔՈՒՄ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Սեպտեմբեր 26-ին Նիւ Եորքում կայացել է եռակողմ ձեռագրի մասին հանդիպում՝ Հայաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի արտգործնախարարների մասնակցությամբ, որի ընթացքում, Հայաստանի արտգործնախարարու ժեան մամուլի եւ տեղեկատու ժեան վարչութեան փոխանցմամբ, քննարկուել են «տարածաշրջանային վերջին գարգացումները եւ կովկասեան պլատֆորմի ստեղծման նախաձեռնութիւնը»:

Այդ հանդիպմանը նախորդել են Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանի բանակցութիւնները իր ադրբեջանցի պաշտօնակից Էլմար Մամեդյարովի հետ՝ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահներ Բեռնար Ֆասիէի, Մեթիւ Բրայդայի, Եուրի Մերկել-յակովի եւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ Անջէլ Կասպրիզիկի մասնակցությամբ: «Օրակարգում է եղել Մինսկի խմբի շրջանակներում 2007

թուականին համանախագահների կողմից ներկայացուած մադրիդեան առաջարկութիւնների հիման վրայ ընթացող արցախեան հիմնահարցի կարգաւորման բանակցային գործընթացը: Հանդիպման ընթացքում վերահաստատուել է, որ հիմնախնդիրը պէտք է լուծուի միայն բանակցութիւնների միջոցով եւ խաղաղ ճանապարհով», - փոխանցում է Հայաստանի արտգործնախարարութիւնը:

Դրանից յետոյ Նալբանդեանն ու Մամեդյարովը արդեն առանձնազրոյցի ընթացքում քննարկել են «հիմնախնդրի կարգաւորման վերաբերեալ կողմերի դիրքորոշումները մօտեցման ուղիները եւ Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների նոր հանդիպման կազմակերպման հնարաւորութիւնը»:

Մինչեւ եռակողմ հանդիպումը Էդուարդ Նալբանդեանը բանակցութիւններ է ունեցել Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանի հետ:

ԹՈՍԱ ՀԱՄԱՐԲԵՐԳԸ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ Է ՄԱՐՏԻՍԵԿԵԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐԵԱԼ ԻՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Կայ ազատագրկուածների վերաբերեալ գոհացնող լուծման հասնելու եւ մարտի իրադարձութիւնների համար մեղաւորներին պատասխանատուութեան կանչելու հրատապ անհրաժեշտութիւն»,- այս հիմնական ուղերձով Եւրոպայի խորհրդի մարդու իրաւունքների յանձնակատար Թոմաս Համարբերգը այսօր Ստրասբուրգում հրապարակել է Յուլիսի 13-15-ը Հայաստան կատարած այցի վերաբերեալ իր եզրակացութիւնների ամփոփումը:

«Ազատութիւնից զրկուած անձանց իրավիճակը շարունակում է լուրջ մտահոգութեան աղբիւր լինել», - ասել է յանձնակատարը: «Անպատասխան են մնում հարցեր՝ կապուած քրէական մեղադրանքների բնույթի եւ իրականացուող հետաքննութեան նպատակների հետ»:

Հայաստանում Եւրախորհրդի տեղեկատուական գրասենեակի փոխանցմամբ՝ Համարբերգը ափսոսանք է յայտնել, որ «19 անձանց նկատմամբ քրէական գործերը հիմնուած էին միայն ոստիկանական վկայութեան վրայ»:

Յանձնակատարը յատկապէս մտահոգուած է 7 անձանց՝ ներառեալ ընդդիմութեան յայտնի ներկայացուցիչների, նախնական կալանքում գտնուելու կապակցու-

թեամբ: «Անընդունելի է շարունակել կալանքի տակ պահել կամ դատապարտել (նոյնիսկ ազատագրկում չնախատեսող պատժամիջոցների) որեւէ մեկին գուտ նրա քաղաքական համոզմունքների կամ ոչ բունի գործողութիւնների համար», - ընդգծել է Թոմաս Համարբերգը:

«Այնուհետեւ Յանձնակատարը անդրադարձել է ազգային հետաքննող յանձնաժողովի ստեղծմանը: Ողջունելով այս առումով կառավարութեան պրոակտիւ մօտեցումը՝ նա առաջարկել է, որ շարունակական ջանքեր գործադրուեն միջազգային փորձագիտական խորհրդատուութեան եւ ընդլայնուած ու ամբողջապէս ընդգրկուած խորհրդակցութիւնների գործընթացի միջոցով», - նշուած է Եւրախորհրդի հաղորդագրութիւնում:

«Փորձագիտական խմբի ստեղծումը, որին կը յանձնարարուի իրականացնել համապարփակ, անկախ, անկողմնակալ ու թափանցիկ քննութիւն, որը արժանահաւատ կ'ընկալուի Հայաստանի ողջ բնակչութեան կողմից, թոււմ է հասանելի է: Յուսով եմ, որ այս հնարաւորութիւնը կ'ընդունուի եւ կը շարունակի կառուցողական արձագանքներ ստանալ բոլոր համապատասխան դերակատարներին», - յայտարարել է Թոմաս Համարբերգը:

«ՂԱՐԱԲԱՂԸ ՊԵՏՔ Է ԱԹՈՒ ՈՒՆԵՆԱՅ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՍԵՂԱՆԻ ՇՈՒՐՋ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Անկախ վերլուծաբան Ռիչարդ Կիրակոսեանը գտնում է, որ եթէ ուզում են լուծուի Լեռնային Ղարաբաղի հարցը, ապա պէտք է աթոռ տալ Լեռնային Ղարաբաղին՝ Ստեփանակերտին, եւ Ղարաբաղը իր ապագայի համար աթոռ ունենայ Մինսկի խմբի սեղանի շուրջ: Բայց անկախ կոնֆլիկտաբան Արտակ Աիւնցը այսօրուայ պայմաններում չի տեսնում դրա հնարաւորութիւնը:



Անկախ վերլուծաբան Ռիչարդ Կիրակոսեան

նը աւելի շահեկան դուրս գար: Իսկ Թուրքիայի որպէս միջնորդ հանդիսանալը, կոնֆլիկտաբանի համար համոզիչ չէ, քանի որ միջնորդի համար երկու նախապայման կա՝ լինել չէզոք եւ անկողմնակալ, ինչը Թուրքիայի պարագայում չի տեսնում:

Անկախ վերլուծաբան Ռիչարդ Կիրակոսեանը եւս համաձայն է կոնֆլիկտաբանի հետ եւ գտնում է, որ Թուրքիան չի կարող տեղ գրաւել Լեռնային Ղարաբաղի ինդերի կարգաւորման առումով եւ, նրա խօսքերով, հիմա Թուրքիան կոնֆլիկտի մէջ է Ադրբեջանի հետ: Եւ կոնֆլիկտաբանը, եւ վերլուծաբանը դրական են գնահատում Գիւլի այցը Հայաստան միաժամանակ նշելով, թէ չզիտեն մանրամասներ՝ ինչ են քննարկել Սերժ Սարգսեանը եւ Գիւլը:

ինչ վերաբերում է օգոստոսեան վրաց-օսեթական պատերազմին, ապա անկախ կոնֆլիկտաբանը կարծում է, որ թէեւ եղան գոհեր, սակայն Հայաստանը յայտնուեց շահեկան վիճակում, քանի որ եթէ մինչեւ այդ Թուրքիան խօսում էր ուժով ազատագրուած տարածքները ետ վերցնելու, ապա հիմա խօսում է ինդերի խաղաղ կարգաւորման մասին:

Երկու բանախօսներն էլ համոզուած են, որ Մինսկի խմբի ձեռագրի փոփոխութիւն չի լինի եւ կը պահպանուի նախկին գործընթացը, քանի որ այն լաւագոյն գործընթացն է ինդերի կարգաւորման առումով:

Արտակ Աիւնցի խօսքերով՝ մինչ օրս Թուրքիայի մասնակցութիւնը Ղարաբաղեան կոնֆլիկտին պայմանաւորուած էր նրանով, որ ջնակցում եւ նպաստում էր Ադրբեջանին, որպէսզի Ադրբեջա-

ԱՐՄԵՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱԼ

Շարունակուած էջ 1-էն

Արմէն Յարութիւնեան ըսած է, որ կը կիսում նաեւ Համարբերգի այն մտահոգութիւնը, որ մինչեւ այսօր դատապարտուած են միայն Լեռն Տէր-Պետրոսեանի կողմնակիցները, եւ ոեւէ ոստիկան

պատժի չէ ենթարկուած:

«Իհարկէ, դա մտահոգիչ է, որովհետեւ նմանատիպ դէպքերում, եթէ պարզուած է, որ միայն ընդդիմութեան ներկայացուցիչներն են մեղաւոր, դա արդէն ցոյց է տալիս, որ ինչ-որ բան այնպէս չէ»:

ՇԱՐԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԸԱՄԱՐ

Շարունակուած էջ 1-էն

Խօսելով երկրէն ներս առկայ ընկերային հարցերու մասին Հնչակեան Կուսակցութեան ատենապետը ըսաւ, «Երկրում քաղաքական ճգնաժամ է, որի պատճառով շատ քիչ է խօսում սոցիալական ինդերների մասին: Հայաստանում սոցիալական ճգնաժամը գնալով աւելի ու աւելի խորանում է»: Ան ըսաւ թէ, 90-ական թուականներուն Հայաստանէն կ'արտագաղթէին միայն սոցիալական պայմաններու պատճառով, այսօր արտագաղթը պայմանաւորուած է ոչ միայն սոցիալ-տնտեսական պատճառներով, այլ այն, որ մարդը իրեն պաշտպանուած չզգար իր իսկ երկրին մէջ: «Այսօր երկիրը լքում են հիմնականում 16-40 տարեկանները, ովքեր իրենց կարող են այլ երկրում էլ դրսեւորել: Իշխանութիւնները բացարձակ ոչինչ չեն անում արտագաղթը կանխելու համար», - մեղադրեց Լիւդմիլա Սարգսեան:

Կուսակցութեան ատենապետը

Ապա վեհափառ Հայրապետը նոր Միւռոնը տեսնազրեց եւ օրհնեց Կենաց Խաչով, Աստուածամուխ Ս. Գեղարդով եւ հայոց հաւատքի հայր Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջով: Սրբազան արարողութեան ընթացքում Նորին Սրբութիւնն իր

անդրադարձաւ նաեւ «Զինապարտութեան մասին» օրէնքին մէջ փոփոխութիւններ մտցնելու հարցին ըսելով, որ իշխանութիւնները կը մոռնան, որ 18-ամեայ երիտասարդը մեր ապագայ գիտնականն է, ապագայ տնտեսագէտը, երկրի ապագան: «Դրանով պայմանելու են նաեւ մեր երկրի մտաւոր պոտենցիալը»: Լիւդմիլա Սարգսեանի համաձայն՝ շատ քչերն են, որոնք բանակէն յետոյ ի վիճակի կ'ըլլան շարունակել ուսումը:

Հնչակեան Կուսակցութեան ատենապետը համաձայն չէր այն տեսակէտի, որ ժողովուրդը հիասթափուած է եւ այլեւս չի մասնակցիր հանրահաւաքներուն. «Ժողովրդի մեծագոյն հիասթափութիւնը գալիս է իշխանութիւններից»:

«Մենք գործ ունենք մի իշխանութեան հետ, որը բացարձակ մտահոգուած չէ երկրի ապագայով, բացարձակ պատրաստ չէ մարտահրաւէրներին, բացարձակ չի ուզում իր երկրում ինչ-որ բան փոխել», - եզրակացուց Լիւդմիլա Սարգսեան:

Հայրապետական պատգամն ուղղեց համայն հայութեանը՝ անդրադառնալով մեր ժողովրդի եւ կեկեղեցու կեանքում Ս. Միւռոնի խորհրդին - նշանակութեանը», ասուած է Մայր Աթոռի տեղեկատուական համակարգի հաղորդագրութեան մէջ:

ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Շարունակուած էջ 1-էն

լոյս Միւռոնի կաթան տեղափոխուեց Ս. Տրդատի բաց խորան:

Ս. Տրդատի բաց խորանում Միւռոնի օրհնէքը սկսուեց միասնական «Տէրունական աղօթքով»: Սրբազան Հայրերն ընթերցեցին հատուածներ Հին եւ Նոր Կտակարաններից, ինչպէս նաեւ աղօթքներ՝ նուիրուած Ս. Միւռոնին:

Նորին Սրբութիւնը նախ Միւռոնի կաթսայի մէջ լցրեց 40-ից աւել ծաղիկներից պատրաստուած

հիւթը, ապա բալասանը: Քուէյթում եւ Արաբական Միացեալ Էմիրութիւններում կաթողիկոսական փոխանորդ Տ. Կորիւն արքեպիսկոպոս Պապեանը, ի նշան Հայոց Եկեղեցու միասնականութեան, Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցեց Անթիլիասում օրհնուած նոր Միւռոնը: Սրբազան Աւանդութեան համաձայն՝ Ամենայն Հայոց Հայրապետը նոր Միւռոնին խառնեց նաեւ հինը՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով օրհնուած սրբալոյս Միւռոնի զօրութիւնը փոխանցելով նորին:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

«ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆԸ ԿՈՍՊԼԵՍԵՆՏԱՐՈՒԹԻՒՆ ԶԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՒՄ»

Ասում է Վահան Շիրխանեանը՝ հայրենի իշխանութիւններին խորհուրդ տալով չվտանգել երկրի գոնէ ռազմական անվտանգութիւնը՝ ՀԱՊԿ-ի թիկունքում խաղեր տալով ՆԱՏՕ-ի հետ

- Պարոն Շիրխանեան, վերջին հանրահաւաքից յետոյ հասարակութեան մէջ մի տեսակ յոռետեսական տրամադրուածութիւն է առաջացել. մարդիկ կարծում են, որ ընդդիմութիւնը գնում է գործողութիւնների սառեցման ճանապարհով:

- Սառեցում: Իսկ ի՞նչ է, ազատ են արձակուել քաղաքատարկեալները, դադարել են դատավարական մայմունական ներկայացումները, վերականգնուել է ժողովրդի վստահութիւնը, դադարել է արտագաղթը եւ սկսուել է ներգաղթը, դարաբաղեան խնդիրն է լուծուել, թէ՛ իշխանութիւնը ձեռքերը քշտած սկսել է անհաշտ պայքար համատարած անարդարութեան ու անօրինականութեան դէմ: Եթէ սրանցից ոչ մէկը չկայ՝ ուրեմն չկայ նաեւ սառեցում:

- Այդ դէպքում ինչո՞վ բացատրել առաջին նախագահի ելոյթում էմոցիաների եւ սուր քննադատութեան պակասը:

- Էմոցիոնալ ելոյթ եւ Լեւոն Տէր-Պետրոսեանից երբէք չեմ լսել, իսկ քննադատութեան պակաս չկար: Աւելին, շատ տեղին եւ հիմնաւոր քննադատուեց յատկապէս իրականացուող արտաքին քաղաքականութիւնը: Եւ յետոյ, ընդդիմադիր պայքարի ձեւերը բազմազան են եւ չեն սահմանափակուում միտինգով ու երթով:

- Արտաքին քաղաքական գարգացումներն ի՞նչ անմիջական ազդեցութիւն կարող են ունենալ հայաստանեան ներքաղաքական գարգացումների վրայ:

- Քանի որ Հայաստանը ոչ միայն փոքր երկիր է, այլեւ ծանրաբեռնուած է բազում խնդիրներով՝ շրջափակուած, ԼՂՀ, ներքին ճգնաժամ, ոչ լեզիտիմ իշխանութիւն, ցանկացած արտաքին լուրջ իրադարձութիւն իր հետքը կարող է թողնել: Ահաւասիկ՝ ուսուցողական կոնֆլիկտը, որից յետոյ ՀՀ-ի ոչ միայն իշխանութեան, այլեւ ողջ Հայ հասարակութեան, նաեւ՝ ընդդիմութեան առջեւ շատ աւելի ծանր խնդիրներ ծնուեցին: Խօսուում է կենցաղային միջնա արտաքին կողմնորոշման վերանայման մասին: Սա նաեւ պետութեան չկայացուածութեան ցուցանիշն է:

- Այս համատեքստում՝ նաեւ իբրեւ պաշտպանութեան ոլորտի նախկին պաշտօնեայ, ի՞նչ էք կարծում Հայաստանը որ պաշտպանական համակարգում պետք է լինի:

- Խօսելով ռազմական անվտանգութեան մասին, որն, իր կարեւորութեամբ, արցախեան խնդիր ունեցող իշխանութեան համար առաջին տեղում պէտք է լինի: Երկրի ռազմական անվտանգութիւնը հնարաւոր չէ ապահովել, այնպէս, ինչպէս էկոլոգիական, պարենային անվտանգութիւնները, որոնց դէպքում կարող եւ համագործակցել ցանկացած, այդ թւում՝ ոչ բարեկամ երկրի հետ: Կոմպլեքսնտարութիւն ռազմական անվտանգութիւնը չի հանդուրժում, իսկ ՀՀ պարագայում՝ առաւել եւս: Պէտք է լինեն գոյութիւն ունեցող անվտանգութեան համակարգերից որեւէ մէկում՝ իբրեւ վստահելի, յուսալի եւ պայմանագրային պարտաւորութիւններին հաւատարիմ դաշնակից: Խաղեր տալ անվտանգութեան համակարգերի՝ ՀԱՊԿ եւ ՆԱՏՕ-ի միջեւ անթոյլատրելի է:



Ես չեմ բացառում, որ ընթանում է ինտենսիւ քաղաքական առեւտուր: Սա պանրով կամ ցորենով ապահովելու խնդիրն է: ՀԱՊԿ-ը եղել ու պէտք է շարունակի մնալ ՀՀ-ի համար նախընտրելի համակարգ: Անդրկովկասում ստեղծուել է բարդագոյն իրավիճակ, որից Հայաստանը պէտք է ձգտի դուրս գալ հնարաւորինս անկորուստ, բայց կարող է նաեւ շատ մեծ կորուստներ ունենալ:

- Ի՞նչ խոստումներ կարող եր տալ ՆԱՏՕ-ն եւ որքանով դրանք վստահելի կը լինեն այն պարագայում, երբ այդ կառոյցը Հայաստանի նկատմամբ մշտապէս երկդիմի քաղաքականութիւն է վարել:

- Միջազգային յարաբերութիւններում բոլոր երկրները դեկավարուում են իրենց ազգային շահով: ՆԱՏՕ-ն էլ՝ ի դէմս ԱՄՆ-ի, իր ազգային շահն ունի այս տարածաշրջանում, որոնք պայմանաւորուած են հաղորդակցման ուղիներով: Միջին Ասիա-Կասպից ծով-Անդրկովկաս-Եւրոպա: Դա իրենց համար ստրատեգիական նշանակութիւն ունի: Ապա՝ բնական ռեսուրսները՝ նաւթ, գազ: Այս երկու խնդիրներում էլ Հայաստանը լուրջ տեղ գրառեցնել չի կարող, ուստի ՆԱՏՕ-ի անդրկովկասեան ստրատեգիական շահերի սանդղակում Հայաստանն առաջին տեղերում չի կարող լինել: Մեր քաղաքականութիւնը դրանից պէտք է բխի:

- Այսինքն՝ ՆԱՏՕ-ից անվերապահ աջակցութիւն ակնկալել չի՞ կարելի, ինչպէս պնդում են որոշ քաղաքական գործիչներ:

- ՆԱՏՕ-ի աջակցութիւնը կարելի է ակնկալել այնքան, որքան դա չի վնասի Ադրբեյջանի, Վրաստանի եւ Թուրքիայի շահերին: ՆԱՏՕ-ի քաղաքական, ռազմական դեկավարութիւնը, նրա անդամ բոլոր երկրները Հայաստանին յայտարարել են ազրեսոր եւ պահանջում են Ղարաբաղը յանձնել Ադրբեյջանին: Ես նրանց պաշտօնական դիրքորոշման մէջ փոփոխութիւններ չեմ նկատել: Ի՞նչ պետական կամ ազգային շահ կարող ենք ակնկալել:

- Ինչպէ՞ս էք գնահատում Թուրքիա-Հայաստան նորացող յարաբերութիւնները:

- Ես խորհուրդ կը տայի դրանց վերաբերուել այնպէս, ինչպէս կենացներին: Ի դէպ, Հայաստանի շահերից է բխում եւ լաւ է, որ դրանք լոկ խօսքեր են:

- Ինչո՞ւ:
- ՀՀ կիսաիշխանութիւնը չի պատկերացնում ոչ իր անելիքը, ոչ

երկրի վիճակը, ոչ ճգնաժամի էությունը, որն ուստում, քայքայում է Հայաստանը. կիսատ-պրատ օրէնսդրական, հարկային, մաքային դաշտ եւ յանկարծ՝ հայ-թուրքական սահմանի բացում: Հայաստանի համար դա աղէտ կը լինի, որովհետեւ շատ կարճ ժամանակում կը վերանայ ներքին արտադրողը: Կը լինի այն, ինչ եղաւ Վրաստանում: Նոյնիսկ Սեւ ծովի լողափերը պատկանում են թուրքերին: Սեւանի լողափերն էլ կը պատկանեն թուրքերին, որովհետեւ մեր Սահմանադրութիւնը օտարերկրացուն հողի սեփականութեան իրաւունք է տալիս: Մինչեւ ՀՀ-ն չունենայ օրինական իշխանութիւն, օրէնսդրօրէն պաշտպանուած ներքին արտադրող, հողի վաճառքը օտարերկրացուն արգելող օրէնք, երկրի զարգացումը չիաթարող ներմուծման քաղաքականութիւն, ներգաղթող, վարուայ օրուան վստահ, համերաշխ հասարակութիւն՝ հայ-թուրքական սահմանի բացման մասին պէտք է մոռանալ:

- Իսկ ինչպէ՞ս էք գնահատում

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄՊԱՌՆԱԼԻԲԸ ՄՆԱՅ ՕԴԻՆ ՄԷՋ

Շարունակուած էջ 1-էն

Շահագարեան իր ելոյթին մէջ յայտարարեց, որ եթէ այսօր աշխարհաքաղաքական իրավիճակը ժամանակաւորապէս ամենաբարենպաստը չէ Շարժման՝ կորուկ գործողութիւններու համար, այդ ոչինչ չի նշանակել: «Որովհետեւ այսօր մենք բոլոր, դուք ապացուցեցիք, որ իշխանութիւններն ինչքան էլ փորձեն տարբեր երկրներում, աշխարհաքաղաքական տարբեր կենտրոններին ասել՝ մենք վերահսկում ենք իրավիճակը, Շարժումը մարել է՝ դա բացարձակապէս սուտ է: Շարժումը կարող է տանեակ անգամ աւելի հուժկու ցուցադրել իրեն, բայց մենք, ի տարբերութիւն իշխանութիւնների, սխալուելու իրաւունք չունենք: Իշխանութիւնները, յատկապէս՝ յանցագործ իշխանութիւնները, որ այսօր գաւթել են Հայաստանը, նրանք կարող են սխալուել 5, 10, 100 անգամ, մենք իրաւունք չունենք, մենք չենք սխալուել, եւ խոստանում եմ, որ չենք սխալուելու»: - շեշտեց Դաւիթ Շահագարեան:

«Ինչո՞ւ է ժողովուրդը հաւաքուում հանրահաւաքների, ի՞նչ խնդիր է ուզում լուծել», - ներկայներուն դիմեց «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեան՝ աւելցնելով, որ եթէ ժողովուրդը կը հաւաքուի հրապարակի վրայ, կարեւոր չէ, թէ ինչ հրապարակի վրայ, միեւնոյն է՝ կը հաւաքուի անկախ վախի միջոցով: «Այս իշխանութիւնները որպէսզի հասկանան դա, շատ պարզ հետեւութիւններ պիտի անեն. ժողովուրդը հաւաքուում է, որովհետեւ արդարութիւն եւ ազատութիւն է ուզում, ուրիշ ոչ մի բան: Իշխանութիւնները պիտի հասկանան, որ հրապարակ չէ, որ պիտի փակեն. կա՞մ իրենք ժողովրդին պիտի տան ազատութիւն եւ լինեն այնքան արդար, որ ժողովուրդը այլեւս չհաւաքուի, կա՞մ այլ տարբերակ չկայ: Ժողովուրդը հաւաքուել է, հաւաք-

ԼՂՀ հարցի լուծման մէջ Թուրքիայի ակտիւացումը:

- Թուրքիան միշտ էլ յայտարարել է, որ ինքը ճանաչում է Ադրբեյջանի տարածքային ամբողջականութիւնը, Հայաստանին համարում է ազրեսոր եւ պահանջում է դուրս բերել գործերը ԼՂ տարածքից, երկու անգամ պատերազմով է սպառնացել մեզ: Գրեթէ ամէն ամիս Պաքու են այցելում Թուրքիայի բարձրաստիճան գիտնորականներ, գիտնում եւ վարժեցնում են ադրբեյջանական բանակը, համատեղ պլանաւորում են գիտնօր կիրառումն ընդդէմ ՀՀ-ի: Դա Հայաստանին եւ հայութեանը հերթական անգամ խաբելու ծրագիր է: Ուրիշ ոչինչ:

- Իրանն էլ էր ԼՂ հարցի կարգաւորման մասնակցելու պատրաստակաւութիւն յայտնել:

- Եթէ Թուրքիան կարող է միջնորդ հանդիսանալ, ապա իրանը առաւել եւս կարող է:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ
«ԱՌԱԻՕՏ»

ուում է եւ հաւաքուելու է այնքան, մինչեւ արդարութիւնն ու ազատութիւնը տիրի այս երկրում», - յայտարարեց Արամ Սարգսեան:

Հանրահաւաքի ընթացքին ելոյթ ունեցաւ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան եւ Կենտրոնի բնակիչներուն կողմէ միահամուռ կերպով մասնակցելու ընտրութիւններուն եւ կողմ բռնակրկել Արարատ Զուրաբեանին, «որովհետեւ Արարատ Զուրաբեանի յաղթանակը համաժողովրդական շարժման յաղթանակն է, Հայ Ազգային Գոնկրէսի յաղթանակն է, մեր ողջ ժողովրդի յաղթանակն է»:

«Երկրորդ կոչս. թախանձում եմ, պահանջում՝ գիտակցել եւ զանգուածաբար անդամագրուել Հայ Ազգային Գոնկրէսին, որովհետեւ դա է մեր պետութեան առողջ ապակենը», - յայտարարեց Տէր-Պետրոսեան՝ շարունակելով. «Եւ երրորդ կոչը. խնդրում եմ, թախանձում, պահանջում՝ Հոկտեմբեր 17-ին հարիւր հազարներով մասնակցել մեր հանրահաւաքին, որտեղ ես տակտիկական գաղտնիքներ չեմ բացայայտի, բայց ազնուաբար, անկեղծօրէն ձեզ կը ներկայացնեմ մեր հետագայ պայքարի ստրատեգիան՝ ոչինչ չթաքցնելով ձեզանից»:

Հակառակ որ հանրահաւաքը արտօնուած չէր, իրաւապահներու կողմէ խոչընդոտելու փորձ չեղաւ: Ոստիկանական ուժերու զգալի մասը տեղակալուած էր Օփերային յարող տարածքը եւ հանգիստ կը հետեւէր բազմութեան:

Հայաստանի ոստիկանութեան պետ Ալիկ Սարգսեան հանրահաւաքին երկու օր առաջ կայացած մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտարարած էր, թէ «այլեւս չի հանդուրժելու շարտօնուած հանրահաւաքները»:

Ընդդիմութեան ներկայացուցիչները, սակայն, հաստատակամ էին հանրահաւաքը կայացնելու իրենց որոշման մէջ եւ կը պնդէին, որ ոստիկանութիւնը իրաւունք չունի բռնութեամբ խոչընդոտել, եթէ նոյնիսկ միջոցառումը արտօնուած չէ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՈՐՀԵՐ

ՀԱՅ-ԹՈՒՐԲ ՇՓՈՒՄՆԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ Ա.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂՐԵԱՆ

- «Տատս դիւանագէտ չէ, էնիա Պէյ:»

- «Ի տարբերութիւն ինձ ու քեզ, Արամ էֆենտի:»

- «Կարծո՞ւմ ես... Մենք ո՞ր օրուայ դիւանագէտն ենք... Մենք իրար հետ պարզապէս աւելի քաղաքավարի ենք քան... անկեղծ: Առաջին հանդիպման համար դա էլ քիչ չէ, թեպէտ ես կողմ եմ, որ աւելի անկեղծ լինենք, քան քաղաքավարի:»

- Չգիտեմ, Արամ էֆենտի, չգիտեմ:»

«Որեւէ հայ եւ թուրք երբեք չեն կարող միայն երկուսով լինել, նրանց արանքում միշտ պիտի գայ, նստի պատմութիւնը:»

«Ուրեմն ինչ, մենք մարդասպանների ա՞զգ ենք: Ո՞վ ասաց, իսկ Մուսթաֆա Նետիմը, նրա գրքում հիանալի թուրքեր կան, անգամ նահանգապետ, վալի... որ հրաժարուէլ են հրամաններ կատարել...»

«Ես խորապէս ցաւում եմ կատարուածի համար:»

«Բայց մենք կարող ենք չանդրադառնալ այս նիւթին: Չենք կարող... որ մենք ամէն մի րոպէ երեքով ենք, ես եւ դու եւ ձեր պատմութիւնը:»

«Մեր պատմութիւնը էնիս պէյ, այդ պատմութիւնը նաեւ քոնր պիտի դառնայ:»

«Համոզուած եմ, հայերի ամէն երրորդը արեւմտահայ է: Հարցրու, ինչո՞ւ իրենց ծննդավայրում չեն:»

The Typical Profile of the Politically Persecuted

By Tigran Paskevichyan
Hetqonline

Today in Armenia there are over one hundred individuals who are being politically persecuted in one form or another. This hounding of people for their political beliefs started after the February 19th presidential elections. In order not to distinguish between those incarcerated and those being pursued it is possible to employ the term "politically persecuted", especially since for the most part it also characterizes those individuals who are persecuted not for their political actions but for the positions they take as citizens.

The politically persecuted can be divided into 4 main groupings. 1) Members of organizations grouped around opposition presidential candidate Levon Ter-Petrosyan 2) individuals who played an active role on election day; managers of campaign headquarters and proxies 3) rank and file demonstrators 4) others.

This is not a rough classification. In certain cases those belonging to one group can show up in another as well. Take Petros Makeyan for example. Taking the motives of his arrest and trial into consideration he can be placed into the third grouping but he actually represents the first given that he is the President of the "Democratic Fatherland Party". There are also many parallels in the second and third groupings. People who serves as proxies on election day were arrested and charged with being rank and file protestors. For example, Tigran Baghdasaryan, Aram Bareghamyan, Khachik Simonyan and others.

Gagik Jhangiryan is the main representative of the fourth group of so-called "others". The prime reason for their persecution doesn't fall within the other three groups. One can state that the reason for Jhangiryan's involuntary isolation is connected more to October 27th than to the incidents of February-March 2008.

In this group are also those persecuted on familial grounds - Isahak Malkhasyan (the brother of Myasnik Malkhasyan), Vardan Jhangiryan (the brother of Gagik Jhangiryan). Also in the fourth group is Anoush Ghavalyan, the Pizza Di Roma employee. She was arrested solely in order to get her to testify against Khachatur Soukiasyan.

Even though there are more than twenty parties and NGO's in the movement headed by Levon Ter-Petrosyan, chiefly included in the first group are representatives of the Armenian National Movement, the Republic Party, Democratic Fatherland Party, the "Aylntrank" (Alternative) Civic Initiative, the "Armat" Center and those in the "Yerkrapah" (Defenders of the Land) ranks.

In this way, the regime attempts to convey to the society here at home, and why not, to international bodies, that what's involved here isn't a pan-national movement but rather a so-called attempt to regain power by the

Armenian National Movement (ANM). For the most part, those organizations who share the same fate of being persecuted as the ANM are derived from that party. Such is the case with the "Aylntrank" Initiative, the "Armat" Center and the Defenders of the Land Union. The Republic Party can also be said to have derived from the ANM if we don't take into account the unique conditions of its creation. The exception is "Nor Zhamanakner" (New Times) as it has no ties to the ANM.

With the exception of one or two, the charges levied against the political players representing the first group are essentially the same and unprovable. The authorities, with this long-term prospect in sight, have come up with a publicity stunt with which they try to prove that the leading forces of the Movement, being former officials or deputies, have tried to take over the reins of power through a coup. The selection was done in such a way that included in the ranks of the politically persecuted are the former Prime Minister Aram Sargsyan, former Ministers Alexandra Arzumanyan, Smbat Ayvazyan, Souren Abrahamyan and others, former mayors, district leaders and high ranking police officials.

The objective of the political hounding of working Deputies in the National Assembly (Sasoun Mikayelyan, Myasnik Malkhasyan, Hakob Hakobyan and Khachatur Sukiasyan) was to avert the collapse that had already started in the National Assembly. If Mikayelyan, Malkhasyan and Hakobyan hadn't been National Assembly Deputies they would probably be free today and the persecution of Khachatur Sukiasyan would have been limited to economic penalties.

The classification of the second and third groups of the politically persecuted is rather complex since, as I've already stated, many with the attributes of being campaign managers and proxies were charged with so-called mass disturbances, resisting police officers and other such actions. Here too there are many ANM members and Defenders of the Land people. Typical representatives of the second group are Petros Makeyan, Shota Saghatelyan and Ashot Zakaryan who attempted to prevent election fraud in Gyumri. There's Harutyun Urutyun, who tried to prevent fraud in Maralik. Sofya Kalantaryan is another. She got hit with an administrative penalty for working against election fraud in Vanadzor. There's Housik Baghdasaryan who was sentenced in Masis for illegal arms possession and Hovhannes Harutyunyan who was sentenced for the same violation in Arabkir.

Essentially, Karapet Roubinyan, Aram Manoukyan and Ashot Manoukyan are being pursued for the same reason even though the motives for the pursuit or the charges already levied against the arrested not always are connected to their activities during the electoral process.

The authorities were pretty picky



when it came to choosing individuals belonging to the third group (rank and file demonstrators). In this case too the overriding interest wasn't any so-called struggle for the rule of law but for publicity. This group includes Vahe Ghazaryan (the son of Romen Ghazaryan, Chief of the Presidential Guard for Levon Ter-Petrosyan), Souren Sirounyan (a member of the Guard for Internal Affairs Minister Vano Siradeghyan), Sirounyan's brother and Vardan Ghavalbabunts, Vano Siradeghyan's chauffeur.

By singling out these individuals from the tens of thousands of protestors and by making false accusations against them the regime wished to show the public that these former officials who were absent from the Armenian scene for so many years were influencing the state of affairs through these coercive methods. Law enforcement, in order to substantiate the influence wielded by Vano Siradeghyan, had earlier resorted to making an absurd move. This was to arrest Seryozha Siradeghyan, the 73 year-old brother of the former Minister of Internal Affairs and Yurik Mamyun, his sister's husband for allegedly possessing weapons and ammunition.

The charges levied in all four groups are so contrived and baseless that any one of the accused could be substituted by anyone on the outside and not so jailed.

In reality, by not being able to isolate all the participants of the Movement (numbering in the hundreds of thousands) or its principal leader and organizer, Levon Ter-Petrosyan, have tried to put together a mosaic picture of sorts. Thus, the average individual subjected to political persecution is a male between the age of 40-50. He was involved in the Karabakh movement and in the early days of national building. He was a higher education and state governance experience on a variety of levels. Most likely, he actively participated in the Karabakh War. At one point he resigned from his former position and refused to cooperate with the illegitimate authorities. He feels the danger threatening the nation and is ready to struggle in the name of freedom, justice and political liberties. These are attributes, whether taken individually or collectively, that characterize both Levon Ter-Petrosyan and those participating in the Movement.

UAF's 149th Airlift Delivers Over \$4 Million of Aid to Armenia

GLENDALE -- The United Armenian Fund's 149th airlift arrived in Yerevan on September 27, delivering over \$4 million of humanitarian assistance. The UAF itself collected over \$2 million of medicines and medical supplies for this flight, donated by AmeriCares (\$1.6 million) and the Catholic Medical Mission Board (\$793,000). Other organizations which contributed goods for this airlift were: Boston University Medical School/Dr. Aram Chobanian (\$721,000); The Armenian EyeCare Project (\$343,000); Dr. Mary Alani/Focus Armenia (\$114,000); Dr. Hrair Hovaguimian (\$108,000); Fund for Armenian Relief (\$85,000); Prelacy of the Armenian Church-East (\$80,000); Dr. Vahe Karacholu (\$60,000); Dr. Hrair Garabedian (\$49,000); Armenian Missionary Association of America (\$47,000) and Diocese of the Armenian Church-East (\$45,000).

Also contributing supplies to this airlift were: A.P.A.E.F.A (Association Perreuxienne d'Amities et d'Entraide Franco-Armeniennes of France (\$37,000); Hershey Medical Center (\$31,000); Dr. Stephen Kashian (\$21,000); Armenian Technology Group (\$20,000); Shushi School of Music (\$18,000); Dr. Nishan Goudsouzian (\$18,000) and University of Connecticut (\$17,000). Since its inception in 1989, the UAF has sent \$535 million of humanitarian assistance to Armenia on board 149 airlifts and 1,609 sea containers.

The UAF is the collective effort of the Armenian Assembly of America, Armenian General Benevolent Union, Armenian Missionary Association of America, Armenian Relief Society, Diocese of the Armenian Church of America, Prelacy of the Armenian Apostolic Church of America and The Lincy Foundation.

For more information, contact the UAF office at 1101 North Pacific Avenue, Suite 204, Glendale, CA 91202 or call (818) 241-8900.

Armenian Parliament Elects New Speaker

Continued from page 1

dential administration last April after managing Sarkisian's presidential election campaign in his capacity as deputy prime minister. He was also the HHK's campaign manager in the May 2007 parliamentary elections.

The Armenian opposition has denounced both elections as fraudulent, saying that Abrahamian was a key architect of serious falsifications which it says allowed the HHK and its leader to win the polls. Opposition leaders also frequently depict Abrahamian as a quasi-criminal figure, heavily exploiting his "Muk" (Mouse) nickname.

In a recent newspaper interview designed to polish his controversial image, Abrahamian for the first time publicly explained the nickname's origin. He said it dates back to his childhood and should therefore not be construed as proof of his alleged underworld connections.

Professor Terian To Be Honored At A Reception On October 10th

New Rochelle, NY - Professor Abraham Terian will be honored at a reception in New York on the occasion of his retirement from St. Nersess Armenian Seminary, and in recognition of his manifold contributions to the Armenian Church. The reception is being hosted by Abp. Khajag Barsamian in his dual roles as Primate of the Eastern Diocese of the Armenian Church of America and President of the Board of Directors of St. Nersess Seminary. It will take place on Friday, October 10, 2008 at 7PM in the Haig and Alice Kavookjian Hall of the Armenian Diocese at 630 Second Avenue, New York, NY.

From Jerusalem to New York

Dr. Terian has served as Academic Dean and Professor of Armenian Patristics at the Seminary for 11 years. He grew up in the Armenian compound of St. James in Jerusalem, where he received his early education. For six years he was a professional tour-guide throughout the Holy Land. In addition to a Bachelor's degree in history and biblical languages and a Master's degree in archaeology and history of antiquity, he holds a Doctorate in Theology from the University of Basel, Switzerland, specializing in Early Christianity and its Jewish and Hellenistic backgrounds.

Prolific Scholar and Author

Before coming to St. Nersess in 1997, Dr. Terian was Professor of Intertestamental and Early Christian Literatures for twenty years at various universities in the US and abroad and for four years a recurring Visiting Professor for both Classical Armenian and Hellenistic Judaism at the University of Chicago. He is an internationally recognized scholar in these fields.

In 2005 Dr. Terian became the first recipient of the Fulbright Distinguished Chair in the Humanities award, granted by the US Council for International Exchange of Scholars (CIES) and the US-Israel Educational Foundation (US-IEF). As a Fulbright Scholar, he was a visiting professor at the Hebrew University of Jerusalem in 2006.

Terian has published six books and nearly a hundred articles in historical, philological, and literary periodicals and monographs.

Most Important Contribution to Christian Scholarship

At the evening in his honor, his two most recent books will officially be released. Just published by the prestigious Oxford University Press is *The Armenian Gospel of the Infancy: With Three Early Versions of the Protoevangelion of James*. This book contains the first English translation of a famous, ancient collection of legends and traditions concerning Jesus' childhood as preserved and transmit-



Professor Abraham Terian

ted by the Armenians.

The second of Terian's books to be released is *Macarius of Jerusalem: Letter to the Armenians*. In this book, which has already attracted international attention a year before its publication, Terian identifies the author of the brief letter as the early fourth-century Bishop Macarius of Jerusalem, making this the oldest surviving writing pertaining to the history of the Armenian Church.

"There is no doubt in my mind that this work will be Terian's most important contribution to Christian scholarship to date," said V. Rev. Dr. Daniel Findikyan, Dean and Professor of Liturgical Studies at St. Nersess Seminary, and a friend and colleague of Terian. "The importance of this work not only for Armenian Studies, but for the early history of the Eucharist and other sacraments of the church can hardly be overestimated," Findikyan added.

Professor Emeritus

On the occasion of his retirement from full-time teaching, Terian will be granted the title, "Emeritus Professor of Armenian Theology and Patristics" by the St. Nersess Board of Directors. Colleagues from prestigious universities, clergy, and students will be present to celebrate this milestone. Also present will be Dr. Terian's wife, Dr. Sara Karkkainen Terian, a retired Professor of Sociology, who recently completed a comprehensive qualitative sociological study commissioned by the Eastern Diocese of the Armenian Church of America, entitled, "Hidden Treasure: The Armenian Apostolic Church in America (Eastern Diocese) as seen by a Sample of Its Constituents."

The reception is free and open to the public. Those wishing to attend are asked to R.S.V.P. by contact St. Nersess Seminary at: info@stnersess.edu or 914-636-2003.

Prof. Matthew Jendian Authors New Book On Armenian-Americans


FRESNO - After many years of study, research, guidance, and reflection on the issues of assimilation and ethnicity pertaining to Armenian-Americans, Dr. Matthew Ari Jendian's book, *Becoming American, Remaining Ethnic: The Case of Armenian-Americans in Central California*, is being released by LFB Scholarly Publishing and is now available for purchase.

Jendian provides a snapshot of the oldest Armenian community in the western United States. His work explores the processes of assimilation and ethnicity across four generations and examines forms of ethnic identity and intermarriage. He examines four sub processes



Dr. Matthew Jendian

of assimilation—cultural, structural, marital, and identificational—for patterns of change (assimilation) and persistence (ethnicity). Findings demonstrate the co-existence of assimilation and ethnicity. He offers assimilation and the retention of ethnicity as two, somewhat independent, processes. Assimilation is not a unilinear or zero-sum phenomenon, but rather multidimensional and multidirectional. Future research must understand the forms ethnicity takes for different generations of different groups while examining patterns of change and persistence for the fourth generation and beyond. (http://www.lfbscholarly.com/new_americans/jendian_322618.htm; 226 pages. ISBN 9781593322618. \$65. Case bound, orders received by December 1, 2008 with coupon code (FCA08) will receive 20%



discount.)

"For the insights regarding ethnicity and ethnic identity, I am intellectually indebted to Anny Bakalian, Richard Alba, Milton Gordon, and Herbert Gans, and I appreciate the support I have had from so many people, including the 294 men and women of Armenian descent in Central California who participated in the study by returning the completed surveys, to bring this publication to fruition," said Jendian.

The book is part of a series, titled "The New Americans" and edited by Steven J. Gold and Ruben G. Rumbaut, which explores recent immigration and related changes in American society from a variety of disciplinary perspectives. Together the books in this series help us understand how immigration is changing the United States.

Matthew A. Jendian is Associate Professor of Sociology and Director of the American Humanics Nonprofit Administration Program at California State University, Fresno (Ph.D., University of So. California). He teaches courses on race/ethnicity, terrorism and genocide, social issues, public policy, and advocacy. He was honored in "Menk," an encyclopedia of biographies of prominent scholars of Armenian origins. This is his first book.

Council Of Europe Official Again Slams Yerevan

Continued from page 1

parliament, remaining in pre-trial detention on charges of plotting to overthrow the government in the wake of the February 19 presidential election. "The Commissioner's concern is exacerbated by the fact that in several of those cases, the relevant court ordered further two-month extensions as recently as early September 2008," he said.

Hammarberg also questioned the credibility of these and other grave accusations that have underpinned the Armenian government's post-election crackdown on the opposition. He cited a controversial directive that was issued by the head of Armenia's Special Investigative Service, Andranik Mirzoyan, in March and subsequently made public by the opposition. Mirzoyan ordered regional prosecutors to round up local participants of the post-election rallies in Yerevan, wiretap their phones and interrogate their neighbors.

Hammarberg said the fact that the prosecutors were told to collect information on opposition supporters, rather than specific acts, "raises questions about the nature and the intent of the investigation."

The Council of Europe official at the same time praised the authorities in Yerevan for seemingly accepting his proposal to set up an independent body tasked with investigating circumstances of the March 1 clashes that left ten people dead. "The establishment of a group of experts tasked with carrying out a comprehensive, independent, impartial, transparent inquiry, which would be perceived as credible by the whole population of Armenia, appears to be within reach," he said.

A senior pro-government lawmaker said last week that the government camp and the opposition will be equally represented in the body. International experts will also participate in the inquiry, he said.

Mark Your Calendar

Sunday, October 5, 2008 2:30 PM – Chookasian Armenian Ensemble "Armenian Music Lecture & Mini-Concert"
Ararat Eskijian Museum 15105 Mission Hills, CA. For res. & info Maggie: (818) 838-4862

Saturday, November 8, 2008: St. Peter Armenian Apostolic Church 50th Anniversary Dinner and Celebration to be held at the Nazarian Center of the AGBU Manoogian Demirdjian School in Canoga Park- 6:00 p.m.

100-ԱՄԵԱԿ

Ի ՅՈՒՇ ԶԱՅՐԱՊԵՏԻՆ
Տ.Տ. ՎԱԶԳԷՆ Ա ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ԶԱՅՈՑ
ԾՆՆԴԵԱՆ ԶԱՐԻՐԱՄԵԱԿ 1908-2008

ԴՈԿՏ. Տ. ՉԱԽԷՆ Ա. ՔԶՆՍԹ.
ԱՐՁՈՒՄԱՆՆԵԱՆ

Քսաներորդ դարու երկրորդ կեսին Հայ Եկեղեցին վերջին հարիւրամեակներու ընթացքին առաջին անգամն ըլլալով փայլեցաւ բացառիկ յառաջդիմութեամբ, շնորհիւ երջան. Տ.Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ իր անձին հմայքովն ու նուիրումով, իմաստութեամբն ու բարեմոյն նկարագրովն եւ իր դիւանագետի բարձր կարողութեամբ, իր գահակալութեան 39 տարիներու երկայնքին, ղեկավարեց այդ սրբազան հաստատութիւնը զայն առաջնորդելով դէպի խաղաղ, երջանիկ ու շինարար հորիզոններ: Հայ Եկեղեցին եւ Հայ ազգը իրենց անցեալի հարազատ դրոշմը ստացան Վազգէն Հայրապետի գահակալութեամբ միանգամընդմիջտ:

Տարի մը առաջ այս օրերուն կը նշէինք վախճանման հարիւրամեակը Հայոց Հայրիկ Տ.Տ. Մկրտիչ Ա Հայրապետին, որ իր աչքերը կը փակէր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ, ու տարի մը ետք աշխարհին կը բանար իր աչքերը նորածին մանուկ մը Ռուսմանիոյ մայրաքաղաք Պուքրէշի մէջ: 1908 Սեպտ. 20ին կը ծնէր միամօր որդին Աբրահամ Պալճեան եւ Սիրանոյշ Մարգարեան ամուսին ու երեք օր ետք մկրտուելով Ս. Աւագանին կը ստանար Լեւոն Կարապետ անունը: Աստուածային նախախնամութեամբ խրիմեան Հայրիկ կը մեկնէր, ճամբան բանալով իր ապագայ յաջորդին, որ ուղիղ Հայրիկի վախճանումէն յիսուս տարիներ ետք իր 47 երիտասարդ տարիքին, 1955 թուին, արժանաւորապէս պիտի բազմէր Հայոց Հայրապետութեան գերագահ Աթոռին:

Առաջին այդ յիսուս տարիները եղան ճակատագրական, ողբերգական եւ հայ ազգին համար փորձանքներով լեցուն տասնամեակներ, որուն ընդմէջէն նորածին մանուկը Ռուսմանիոյ մէջ աճեցաւ, զարգացաւ, համալսարանական բարձր ուսմամբ օժտուեցաւ, խրիմեան Հայրիկի մասին գրեց իր առաջին մենագրութիւնը, եղաւ հեղինակ շարք մը գիրքերու որպէս մանկավարժ եւ խանդավառ ուսուցիչ ու մարզիկ, մինչեւ այն ատեն երբ նախախնամութեան կանչը գրինք հոգեւորական դառնալու կոչման առաջնորդեց իր 35 տարեկանին, հասուն, գիտուն եւ ինքնավստահ քայլերով:

Այսօր, ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի անմնացորդ երախտիքով ազգովին կը յիշատակենք Տ. Տ. Վազգէն Ա երջանկայիշատակ Հայրապետի ծննդեան 100-ամեակը որ իր հոգեւորականի յաջորդ յիսնամեակը՝ 1943էն մինչեւ 1994, նուիրեց Հայաստանեայց Մայր Եկեղեցոյ, նախ որպէս թեմակալ առաջնորդ Ռուսմանիոյ եւ Պուլկարիոյ թեմերուն, եւ ապա շուտով որպէս երկարամեայ, շինարար, եւ բազում առաքինութիւններով օժուոն Կաթողիկոսը Ամենայն Հայոց: Եթէ իր ծննդեան յաջորդող յիսնամեակը հայոց ցեղասպանութեան, հարածանքի, կեղեքումի, Համաշխարհային Ա եւ Բ Պատերազմներու, ինչպէս նաեւ Սովետական կարգերու բռնարարներու ծանր շղթայ մը եղաւ, Լեւոն Կարապետ Պալճեան, ապա օժեալ Հայրապետը

Վազգէն Ա, որպէս իմաստուն դաստիարակ եւ շնորհալի հոգեւորական, այդ շղթային օղակները մէկ առ մէկ քակելով այդ նոյն տարիները փոխարինեց յաջորդող յիսնամեակի համբերատար, ազնուական եւ դիւանագետ հոգեւորականի մը բացառիկ իրագործումներու հոյակապ հանդիսագրութեամբ: Նորընտիր Հայրապետը



աշխարհի երկնակամարին ներքեւ, Արարատի հայեացքին տակ, եւ ի սփիւռս աշխարհի տարածուած իր հոգեւոր գահակներու կեանքէն ներս գործեց անդադրում, հիացումի եւ պատկառանքի մնայուն եւ հարազատ դէմքը դառնալով թէ՛ հայուն, թէ՛ օտարին, անհաւատին ու զեղջուկին հաւասարապէս:

Թող ներուի ինծի յայտնել այստեղ հետեւեալ յուշը: Ժիշդ յիսուս տարիներ առաջ, 1958 թուի այս օրերուն Մայր Աթոռի մէջ կը նշուէր Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի ծննդեան յիսնամեակն ու գահակալութեան երրորդ տարեդարձը: Ներկայ էին ժամանակի առաջնորդ սրբազաններն ու ակաւնաւոր աշխարհականներ կայացուցիչներ ու մտաւորականներ արտասահմանի ամէն կողմերէն: Հոն անձամբ ներկայ էր նաեւ երիտասարդ հոգեւորական մը, որ հրաւէր ստացած էր Գերագոյն Հոգեւոր Խորհուրդէն, ու Եթովպիայէն որպէս տեղւոյն հոգեւոր հովիւր առաջին անգամն ըլլալով Հայրենիք ու Ս. Էջմիածին ուխտի կ'երթար խանդավառութեամբ ու ամբողջ հայոց պատմութիւնը ծրարած իր մտքին ու սրտին մէջ: Հոն Մայր Տաճարին մէջ ան կը ստանար մասնաւոր վարդապետի չորս աստիճանները Վազգէն Հայրապետին օրհնութեամբ: Այսօր արտասահմանէն Մայր Աթոռ այցելող հոգեւորականներու շարքին մէջ եղող Ձեռն յայտնուան բանախօսը կը մնայ միակ վերապրողը որ յիսուս տարի առաջ այցելած ըլլայ Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Պատմական վկայութիւն մըն է այս եւ վստահ եմ որ պիտի ուզէիք գիտնալ:

1942 թուականին վախճանած էր Ռուսմանիոյ թեմին Առաջնորդը՝ Յուսիկ Արք. Չոհրապետ: Բոլորին աչքը կեդրոնացած էր երիտասարդ մտաւորական ուսուցչին վրայ, որոնց ինդրանքին ընդառաջելով ու մանաւանդ լսելով ներքին կանչը դէպի Քրիստոս եւ Հայ Եկեղեցի, Լեւոն Կարապետ Պալճեան, Համաշխարհային Բ Պատերազմի արհաւիրքներուն ընդմէջէն, ռմբակոծուած եւ վիրաւոր Եւրոպայի ամենավտանգաւոր ու քանդուած ուղիներով, շոգեկառքի հինգ օրուան զննցքով, անապահով եւ տաժանելի ճամբորդութեամբ, Պուքրէշէն Աթէնք կը հասնէր, ստանալու համար Հայ Եկեղեցոյ հոգեւորականի կարգերը՝ դպրութեան, սարկաւա-

գութեան, քահանայութեան, եւ վարդապետական գաւազանի մասնաւոր չորս աստիճաններու՝ Յունաստանի հայոց Առաջնորդ Կարապետ Արք. Մազլըմեանի ձեռամբ, 1943 Սեպտ. 29 եւ 30 օրերուն Աթէնքի Ս. Կարապետ եկեղեցոյ մէջ: Յունաստանի հայոց առաջնորդը մերձաւորագոյն եպիսկոպոսն էր որմէ Պալճեան կրնար ձեռնադրութիւն ստանալ: Կարելի է երեւակայել նորընծայ հոգեւորականին անձկութիւնն ու ապագայի նկատմամբ իր զգացած վերապահութիւնն ու անորոշութիւնը ժամանակի խիստ պայմաններուն ներքեւ, պատերազմի եւ համայնավարութեան, ռմբակոծումի եւ հալածանքի, որոնք ամենօրեայ իրական պատահումներ էին իր աչքին առջեւ, եւ որոնք սակայն մեզի համար թերեւս պատմական տեղիք կը թուին ըլլալ միայն:

Արտասովոր էր նաեւ հոգեւորականի մը համար չանցնիլ հոգեւոր կրթարանէ մը եւ ուսանիլ տարերքը հայ եկեղեցոյ պատմութեան, ծէսին եւ աստուածաբանութեան: Այդ անհրաժեշտութիւնը զլացուեցաւ ընծայացու Պալճեանին որ սակայն օժտուած էր հոգեբանական եւ փիլիսոփայական, մանկավարժական եւ գրական հասուն եւ անփոխարինելի գիտութիւններով: Այսուհանդերձ, թեմին պահանջը նկատի առնելով, ձեռնադրիչ Կարապետ Մազլըմեան արքեպիսկոպոս կանոնական ձեռնադրութեամբ թեկնածուն բարձրացուց երկու օրուան մէջ աշխարհական վիճակէն հոգեւորականի, տալով նաեւ անոր վեղար եւ մասնաւոր վարդապետի աստիճանները, ծաղկեայ փրկուն եւ լանջախաչ կրելու իրաւունք, վերակոչելով գրինք Վազգէն Վրդ. Պալճեան, իր կատարած բացառիկ այդ ձեռնադրութիւնը ուղղակի ենթարկելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի շուստ-փոյթ հաւանութեան, ուր չկար Կաթողիկոս, կար միայն Ազգաւորիք Տեղակալը՝ Գէորգ Արք. Չորեքճեան, որուն պիտի յաջորդէր Վազգէն Հայրապետ տասնամեակ մը ետք:

Նորընծայ Վազգէն Վրդ. Պալճեան, որուն կ'ընկերանար իգնատիոս քահանայ Քիլիմեան, միասին, դարձեալ պատերազմի արհաւիրքներուն ընդմէջէն ապահով կը վերադառնար Պուքրէշ՝ պատրաստ Աստուծոյ օգնականութեամբ վարելու իր պաշտօնը, Սուչավայի Ս. Հաճկատար վանքին մէջ անցընելով իր քառասունքը ու հոն մատուցանելով իր անդրանիկ պատարագը:

1945 թուին Տեղակալ Գէորգ Արք. Չորեքճեան, բռնակալ Ստալինին կը ստանար անկարելի նկատուած արտօնութիւնը, եւ Յունիսին արդէն իսկ ուշացած Ազգային-Եկեղեցական Ժողովը կը հրաւիրէր

ի Մայր Աթոռ, նախագահութեամբ իր անդակից եւ դասակից Տանն Կիլիկիոյ մեծանուն Կաթողիկոս Գարեգին Յովսէփեանցի որ Անթիլիասէն յատկապէս Մայր Աթոռ կը ժամանէր: Աշխարհասփիւռ հայ եկեղեցիներու պատգամաւորները, հասնելով Մայր Աթոռ, միահամուռ Գէորգ Տեղակալ Չորեքճեան արքեպիսկոպոսը Ամենայն Հայոց Կաթողիկոս կ'ընտրէին, որպէս Գէորգ Վեցերորդ, ու Կիլիկիոյ գիտնական Գարեգին Վեհափառ Հայրապետը անձամբ կ'օժէր գինք:

Հոն էր առաջին անգամն ըլլալով որպէս թեմակալ պատգամաւոր նաեւ Վազգէն Վրդ. Պալճեան, իր առաջին հայեացքը ուղղելու Մայր Տաճարին, Արարատին ու Հայրենիքին, ստանալու համար նաեւ նորընտիր Կաթողիկոսէն իրեն յապաղած օրհնութիւնը՝ ի ներկայութեան Կարապետ Արք. Մազլըմեանի, իր հոգեւոր ծնողին, որ որպէս Յունահայ թեմի թեմակալ առաջնորդ կը մասնակցէր Ժողովին եւ Հայրապետի օժման: Վազգէն Վրդ. երեք տարիներ ետք անգամ մը եւս կ'այցելէր Մայր Աթոռ ու այս անգամ Մայրագոյն վարդապետի աստիճանները ստանալու համար վեհափառ Գէորգ Չ Հայրապետին, եւ անկէ միայն երեք տարիներ ետք՝ եպիսկոպոսութեան կը բարձրանար 1951 թուականին որպէս թեմակալ առաջնորդ նոյն Հայրապետի ձեռամբ:

Բռնակալ Ստալին մեռած էր 1953-ին, ու շնչասպառ Հայ Եկեղեցին թարմ շունչ մը առնելու պատեհութիւնը կ'ունենար, երբ մանաւանդ Աստուծոյ կամքով Ռուսմանիոյ Առաջնորդ Վազգէն Եպս. Պալճեան Ամենայն Հայոց Կաթողիկոս կ'ընտրուէր 1955 թուի Սեպտ. 30-ին գումարուած Ազգային-Եկեղեցական Ժողովին կողմէ, ու Հոկտ. 2-ին կ'օժուէր ու կը գահակալէր որպէս Վազգէն Ա Մայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց ներկայ ութ եպիսկոպոսներու ձեռնադրութեամբ:


Նորընտիր Հայրապետը անծանօթ մըն էր արտասահմանի հայութեան, սակայն Սովետական իշխանութիւնները գինք յարմար գտած էին որպէս իրենց թեկնածուն, որուն համար ալ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը գործի լծած էր գինք ներքին թեմեր այցի երթալու տօնական եւ այլ առիթներով երեք ամիսներ շարունակ, երեւանէն թիֆլիս, Կիրովապատն Լենինական, Ատրպէյճանէն Կիրովական, Պուլկարիայէն Ռուսմանիա, ամէն տեղ ու ամէն հայ եկեղեցիներուն մէջ մէկ առ մէկ պատարագելու եւ քարոզելու:

Սքողեալ այդ թեկնածութեան մէջ Աստուծոյ մատը կար, ու հայ եկեղեցին ու ազգը միայն շնորհակալ եւ երախտապարտ կրնային ըլլալ օրուան իշխանութեանց իրենց կատարած նախընտրութեան համար: Ապագան միայն այդ ճշմարտիւ ցոյց տուաւ մեր եկեղեցիին ու ազգին: Միահամուռ կատարուած քուէարկութեամբ Ս. Գրիգոր Լուսաւորչի Գահը կը բարձրանար այլապէս լաւագոյն թեկնածուն՝ Աստուծոյ Ընտրեալը Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա Հայրապետը Ամենայն Հայոց: Գործունէութեան ընդարձակ, խոպան եւ բազմաշփոթ դաշտ մը

100-ԱՄԵԱԿ

ՈՒԻԼԻՇՍ ՍԱՐՈՅԵԱՆ՝ ՀԱՆՃԱՐԵՂ ԳՐՈՂԸ

ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆ
(Շարունակում մախտրդ թիւէն)



«Անունս Արամ է»ն համադրութիւնն է պայմանական ամերիկեան գրողին եւ հայ գրողին: Անոնց ընդելուզումով Սարոյեանի գրական դիմագիծը կը ստանայ իր լրիւ, ամբողջական դիմագիծը: Ֆրեզնոն եւ հոն ձեւաւորուող գաղթական հայութիւնը, մանկութեան իր օրերը տուած են գիրքին հիմնական ատաղձը: Հոն, բոլոր հերոսներուն մէջ կան մասնիկներ Սարոյեանի անձնական նկարագրէն, ապրումներէն եւ փորձառութենէն: Սարոյեան անուղղակիօրէն ինքն է հոն՝ բազմապատկուած, անկրկնելի եւ միշտ նոր: «Անունս Արամ է»ն հայկական մարդկայնութեան տիեզերքն է փոքր իր պարունակին մէջ:

Նոյն բարեմասնութիւնները կը գտնենք նաեւ իր առաջին վէպին՝ «Մարդկային կատակերգութիւն»ին մէջ: Մթնոլորտն ու միջավայրը նոյն Ֆրեզնոն է, հոս այլաբանական նորէն իթաքա յորջորջուած: Հերոսները նոյն հայու մանուկներն ու պատանիներն են, նոյն տառապած, գաղթական այրերն ու կիները՝ նմանապէս այլաբանականօրէն Հոմերի, Եուլիսիսի, Քէթիի եւ Մաթիլիի, Պէսի եւ Մարքիսի փոխարկերպուած: Գրքին խորագիրն իսկ Պալգաքի կոթողական երկերուն համադրական անուան որդեգրումով կը մատնէ հեղինակին միտումը քողազերծելու մարդկային ճակատագրին անյարիր հանդիսացող պատերազմի դժինեմ դիմագիծը: Հէքիաթային մանկագրութիւնն է իրը, այլ կախարդական իրապաշտութիւն մը, որով ան նոյնիսկ թշուառութեան եւ գրկանքի պայծաններուն տակ անաղարտ կը պահէ իր փոքր հերոսներուն նկարագրի լաւագոյն գիծերը, շնորհելով անոնց բարութեան, եղբայրակցութեան եւ կեանքին հանդէպ վճիտ նայուածք ցուցաբերելու առաքինութիւն, երազելու տենչ ու քնարական շունչ: Սարոյեանի հիւմորը բնաւ խայթող է այլ պարուրուած է խոր թախիծով մը, որ կ'արգահատի մարդուն պարտադրուած դաժան եւ դառն ճակատագրին վրայ, եւ կը դրսեւորուի որպէս արդիւնք՝ խոնարհ մարդոց հանդէպ տածած իր անսահման սիրոյ եւ գուրգուրանքի զգացումներուն: Այսպէս, անհամբերութեան, պարզապէս սարքելու եւ ըմբռնելուն համար, հասած պտուղներուն, թաղի մանուկներուն կողմէն յափշտակութեան տեսարանը եւ իբր թէ գանտնք հալածելու իր դերակատարութիւնը կատարելու համար:

Համաշխարհային երկրորդ մեծ սպանդի այդ օրերուն, երբ չակերտաւոր հայրենասիրութեան պիտակին տակ ռազմաշունչ ատելութեան գրականութիւնն մը կը դառնար ի պատուի, Սարոյեան որպէս իրաւ, համոզուած մարդասէր եւ խաղաղապաշտ, ոչ միայն թիկունք կը դարձնէր այդ հոսանքին դէմ, այլ ուղղակիօրէն կը հակադրուէր անոր, իր հոյակապ «Մարդկային կատակերգութիւն» եւ «Վեզլի ձէքսընի Արկածները» վէպերով: Առաջինի մէջ, ան յաջողած է իթաքա փոքր, մանր «տիեզերքին» մէջ խտացնել մարդկութեան մեծագոյն ողբերգութեան՝ պատերազմին քանդիչ հետեւանքները, որպէս հոգեբանական աւերներ, գինուորներու մահազոյժ հեռագիրները բաժնող Հոմերին հոգեկան տագնապահար ապրումները:

րուն ընդմէջէն: Հոս ալ, Սարոյեան ի գործ կը դնէ բոլորին կողմէ չսպասուած չընդունուած հակադարձութեան իր փոփոխակը: - Փոխանակ փոթորկումի եւ լաց ու կոծի տեսարան սարքելու, ան կը մղէ մայրը բարութեան, քնքշանքի խորապէս մարդկային այլ քայլի մը. հեռագրաբաշխ տղուն խոռովքին ի տես ան կ'այլակերպուի ինքնուրու մօր կերպարի:

- «Օհ մի՛ վախնար, - ըսաւ մայրը, - ներս մտիր, ներս մտիր, քեզի շաքար հրամցնեմ»:

Ու ներսը, ուրիշ սենեակ մը գնաց եւ վերադարձաւ, ձեռքին շոքոլայի տուփ մը: Դրաւ սեղանին եւ բացաւ տուփը. Հոմեր հոն տեսաւ շոքոլայի տարօրինակ ծրարիկներ:

- Կե՛ր, - ըսաւ մայրը, - բոլոր տղաքը կը սիրեն քաղցրեղէնը:

Հոմեր տուփէն վերցուց շոքոլայ մը, դրաւ բերանը եւ փորձեց ծամել:

- Պիտի չուզէիր գէշ հեռագիր մը բերել ինձի, չէ՞, - ըսաւ կինը, - դուն լաւ մանչուկ մըն ես, իմ խուանիթոյին մանկութեան այնքան նման: - Ու ան հեռագրաբաշխ տղուն շոքոլայ մը եւս առնել տուաւ:

Հոմեր ծամելով նստաւ մինչ ծեր կինը կը շարունակէր խօսիլ. «Քարթիւսով պատրաստած եմ խուանիթոյիս գալտեան համար: Բայց կ'ը դու ալ, դուն ալ իմ տղաս ես:

Ու մէկէն հեծկտաց կինը, ինքզինք զսպելով այնպէս որ կարծես անպատշաճ ըլլար լացը: Հոմերոս ուզեց փախչիլ, գիտնալով հանդերձ թէ պիտ մնար հոն: Նոյնիսկ պահ մը մտածեց թէ պէտք է մնար հոն կեանքի ամբողջ ընթացքին: Չէր գիտեր ուրիշ ի՞նչ ընել, կինը նուազ դժբախտացնելու համար, եւ թէ՛ ան առաջարկելու ըլլար իրեն իր գաւակին տեղը անցնիլ, ինք անկարող պիտի ըլլար մերժելու: Ան ոտքի ելաւ կարծելով որ կանգնելով պիտի սկսէր սրբագրել այն ինչ որ անսրբագրելի էր, եւ ուրեմն անդրադարձաւ իր մտադրութեան ապիկարութեան եւ անճրկեցաւ աւելի: Մտովի ան կը շարքիկէր ինքզինք ըսելով. «Ի՞նչ կրնամ ընել, Աստուած իմ, ի՞նչ կրնամ ընել. ես պարզ հեռագրաբաշխն եմ»:

Ու ծեր կինը յանկարծ գրկեց զինք ըսելով. «Իմ պզտիկ տղաս, իմ պզտիկ տղաս»:

Չէր գիտեր ինչո՞ւ, բայց ինքզինք վիրաւորուած զգաց ամբողջ պատահածով եւ նաեւ արեան մէջ զգաց տակնուվրայութիւն մը՝ դուրս տալու փափաքով: Սակայն, վանողական չէր գտներ ծեր կինը եւ ոչ ոք: Պարզապէս, այն ինչ որ պատահեր էր ծեր կնոջ, կը թուէր ըլլալ այնքան անարդար եւ տգեղ, որմէ

ինքզինք անհանգիստ կը զգար եւ չէր գիտեր թէ բնաւ պիտի կարենար նորէն շարունակել ապրիլ»:

Կեանքի դաժան մկրտութեան պահն էր Հոմեր - Սարոյեանին համար:

Իսկ «Ուեզլի ձէքսընի Արկածները» վէպով կը նկարագրուէր պատերազմները մղող բանակին ներքին կատուցն ու հոն տիրապետող կամայականութեան, բռնարար քնքրով մարդը նուաստացնող մթնոլորտը, որուն բացայայտման պատճառով, գրեթէ զինուորական ատենախոսքի պիտի կանգնեցուէր հարկադրաբար զինուորագրուած Սարոյեան գրողը, եթէ համաշխարհային անոր հուշակը վարանումի չմատնէր գրաքննիչ դատաւորները:

Սարոյեանի հուշակին մէջ կարեւոր դեր ունեցաւ նաեւ իր թատերգական գրականութիւնը, անոր բերած խոր մարդկայնութեան եւ ձեւի յանդուգն նորարարութեան շնորհիւ: Սարոյեան բեմ հանեց կեանքի սովորական նկատուած երեւոյթներ եւ հատուածներ, նոր դիտողականութեամբ եւ մտայնութեամբ կենդանացած: Իր հերոսները մնացին միշտ խոնարհ դասու անտեսուած էակներ ինչպիսին էին պարմէն-սպասարկողները, կրկէսի ձախողած խեղկատակները, վրիպած բանաստեղծները, անգործ դերասանները, պարող-նուագող նորեղուկ արուեստագէտները, մայթաղիճները, պարզ աշխատաւորներն ու մանուկները:

Զգայացունց դէպքեր եւ եղելութիւններ չաճաւալեցան Սարոյեանի տրամաներուն բեմայարդակին վրայ եւ ոչ ալ գործողութիւնը ճարտար լարուածութեամբ, հեւ ի հեւ վիճակի մէջ պահեց հանդիսատեսը, այլ կեանքի սովորական հոսքը գրեթէ միապաղաղ իր ընթացքը շարունակեց մնալ որպէս տարածախորք, ուր սակայն եկան մարդիկ ամենայն անկեղծութեամբ եւ անմիջականութեամբ մերկացնելու իրենց ներաշխարհն ու ապրումները, պարզելու իրենց մտածումներն ու երազ-

ները, մտորելու իրենց առօրեայ հոգերն ու ցաւերը: Ուրեմն բեմական ֆիզիքական շարժումը փոխակերպուեցաւ ներքին, հոգեկան բացայայտումներով, գրեթէ անտեսելով ժամանակի, վայրի, տեւողութեան միասնութեան անխախտ ըմբռնումները: Այս բոլորը, Սարոյեանի կողմէ նախաձեռնուած եւ կիրարկուած 1938-39 թիւերուն իսկ, միթէ նախաքայլերը չէին յիստնավաթառնական թուականներուն միայն, Եւրոպայի մէջ նոր ձեւաւորուող եւ «անհեթեթ» կոչուող արդի հակա-թատրոնին, (Պեթթ, Եունեսքօ, Ատամով): Անտարակոյս կրնանք հպարտութեամբ նշել թէ Սարոյեան հանդիսացաւ ամերիկեան թատերական արդի դպրոցին հիմնադիրը, ինչպէս իր ժամանակակից Արշիլ Կորքի-Ոստանիկ Ատոյեանը հիմը դրաւ ամերիկեան արդի նկարչութեան վերացապաշտ Արտայայտչականութեան: Այսպէս, Երկուքն ալ արդիականացուցին արուեստը նոր կարելիութիւններով հորիզոններ բանալով: Սարոյեանի բացած ճանապարհով է որ ընթացան ամերիկեան արդիապաշտ թեւըսի Ուիլյամսը, Ալպին եւ Տէյլիտ Մէմթները:

Սարոյեան թատերական առաջին գործը «Իմ Սիրտը Լեռներում է»ն 1939-ին գրուեցաւ եւ բեմ հանուեցաւ, վարպետ պատմուածագիրին հուշակին վրայ աւելցնելու նաեւ նորարար թատերագիրի յայտնագործուող հուշակն ալ: 1935-ին իր գրած «Մարդը Որուն Սիրտը Լեռներում է» փոքր պատմուածքին ատաղձին վրայ վերակառուցուած է այս մէկ արարնոց թատերակը: Ըսինք առաջին թատերական երկը՝ այն իմաստով որ հանրութեան բերուած առաջինը հանդիսացաւ ան: Բայց թատերականութեան բնագոյն ու շնորհքը արդէն զգալի էր իր բոլոր պատմուածքներուն մէջ, շնորհիւ իր աշխոյժ, դիպուկ եւ կտրուկ խօսակցական լեզուի կենդանութեան եւ

Շար.ը էջ 16

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄ

ԳԵՐՆ. Տ. ՅՈՎԿԱՆ ԱՐԵ. ՏԵՐՏԵՐԵԱՆ ԱՌԱՔԱՆՈՂ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՕՇՈՒՍ ԴԻՏԻ ԵՆՈՐԸ

ԲՐՆ. ԳՐԻԳՈՐ ԱՐԿ ԱՌԱԳԵԱՆԻ ԵՒ ԲՐՆ. ԱՐԱԷՆ ԱՐԿ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԻ

Տեղի պիտի ունենայ Հինգշաբթի Հոկտեմբեր 16, 2008ին Երեկոյեան ժամը 6:30ին Փասադինայի Ար. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ

Եկեղեցւոյ Հասցեն
2215 East Colorado Blvd., Pasadena, CA 91107

Արարողութեան Եւրո Հիւրասիրութիւն Մուտքի նուէր՝ \$ 100

Տեղեր ապահովելու համար
Բեռնային Եկեղեցւոյ գրասենեակ, Բեռ. (826) 449-1523
կամ Առաջնորդարան, Բեռ. (818) 558-7474

ՓԱՂՈՒԹԱՅԻՆ

ՄԻԱՅԵԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՆՏԻ 149-ՐԴ ԹՈՒՉՔԸ ԱԲԵԼԻ ՔԱՆ \$4 ՄԻԼԻՈՆԻ ՆՊԱՍՏ ՈՒՂԱՐԿԵՑ ՀԱՅԱՍՏԱՆ

Միացեալ Հայկական Ֆոնտի 149րդ թուիչքը Երեւան հասաւ Սեպտեմբեր 27ին, փոխադրելով աւելի քան \$4 միլիոն արժողութեամբ մարդասիրական օգնութիւն:

Այս թուիչքով, Միացեալ Հայկական Ֆոնտը իր կողմէ տրամադրեց \$2 միլիոն արժողութեամբ դեղորայք եւ բժշկական պիտույքներ, որ նուիրած էին AmeriCares կազմակերպութիւնը (\$1.6 միլիոն արժողութեամբ) եւ կաթողիկէ Բժշկական Առաքելութեան վարչութիւնը (\$793,000):

Հետեւեալ կազմակերպութիւններն ու անհատները եւս ապրանքներ նուիրելով մասնակցեցան այս թուիչքին - Պոսթոնի Համալսարանի Բժշկական Բաժանմունքը/Բժ. Արամ Զօպանեան (\$271,000 արժողութեամբ), Հայաստանի Ակնաբուժական Ծրագիրը (\$343,000), Բժ. Մարի Ալանի/Focus Armenia (\$114,000), Բժ. Հրայր Յովակիմեան (\$108,000), Հայկական Օգնութեան Ֆոնտը (\$80,000) Ամերիկայի Արեւելեան Թեմի Ազգային Առաջնորդարանը (\$80,000), Բժշկահէ Գարաչօլու (\$60,000), Բժ. Հրայր Կարապետեան (\$49,000), Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը (\$47,000), եւ Հայաստանեայց Եկեղեցոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թե-

մը (\$45,000): Թուիչքին մասնակցեցան նաեւ Ֆրանսայէն Associaton Perreuxienne d'Amities et d'entraide Franco-Armeniennes կազմակերպութիւնը (\$37,000), Hershey Medical Center (\$31,000), Բժ. Սթիվըն Քաշեան (\$21,000), Հայ Թեքնաբանական Խումբը (\$20,000), Շուշիի Երաժշտանոցը (\$18,000), Բժ. Նշան Կուտսուզեան (\$18,000), եւ Քոնէթիքըթի Համալսարանը (\$17,000):

1989էն ի վեր, Միացեալ Հայկական Ֆոնտը 149 թուիչքներով եւ 1,609 ծովային արկղներով \$535 միլիոն արժողութեամբ մարդասիրական նպաստ ուղարկած է Հայաստան:

Միացեալ Հայկական Ֆոնտը համատեղ աշխատանքն է Ամերիկայի Հայկական Համագումարին: Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան, Հայ Օգնութեան Միութեան, Հայաստանեայց Եկեղեցոյ Հիւսիսային Ամերիկայի Առաջնորդարանին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ Ամերիկայի Առաջնորդարանին, եւ Լինսի Հիմնարկին:

Յաւելեալ տեղեկութեան համար, կը խնդրուի դիմել Միացեալ Հայկական Ֆոնտի գրասենեակին՝ 1101 North Pacific Avenue, Suite 301, Glendale, CA 91202 կամ հեռաձայնել (818) 241-8900 թիւին:

ԼԻՆՍԻ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Շ. եւ Է. Մերտինեան Հայ Աւետարանական վարժարանը 150,000 տոլարի իշխանական նուիրատուութիւն մը ստացաւ Լինսի Հիմնարկէն:

Պրն. ձէյ Բաքով, Հիմնարկին նախագահը, իր նամակին մէջ կը նշէ որ այս նուիրատուութիւնը եղած է վարժարանիս, Հիմնուած անոր 2008-2009 տարեշրջանի կարիքներուն վրայ:

Մերտինեան վարժարանի մեծ ընտանիքը երախտապարտ է Լինսի Հիմնարկին, որ նիւթական իր աջակցութեամբ զօրավիգ կը հանդիսանայ մեր վարժարանին, որպէսզի հայ մանուկներ կարենան բարձր կրթութիւն ստանալ հայկական ու քրիստոնէական միջավայրի մէջ եւ պատիւ բերող քաղաքացիներ դառնան այս երկրին ու հայութեան:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 for USA
 * \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
 * \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel :----- Fax : -----

www.massisweekly.com



«Քաջ Նազար» հրատարակչականի և հեռուստաժամի Լախաճեռնութեամբ

ՍՈՌԲ ԾՆՈՒՆԳԻ ԲԻՍՆԱԳՐԱՄԻ Ի ՆՊԱՍՏ ԲԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ԲԱՇՄԱՆՂԱՄ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ (հիմնուած 1999թ.)


"Kach Nazar" Magazine & "Kach Nazar" TV Broadcasting Presents CHRISTMAS FUND FOR ARMENIAN ORPHANS AND DISABLED CHILDREN AND THE RESTORATION OF CHILDREN'S HOMES (Est. 1999)

ՕԳՆԵՔ ՄԵՉ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ ԿԵՐՏԵԼՈՒ ԲԱՍԱՐ

HELP US TO BUILD OUR FUTURE . . .

9-ՐԴ ԹԵԼԵԹՈՆ 2008 ԿԻՐԱԿԻ, ՆՈՅԵՄԲԵՐ 2 (10 ԺԱՍ) A.M.G.A. TV 9-TH ANNUAL TELETHON SUNDAY, NOVEMBER 2, 2008 (10 HOURS) A.M.G.A. TV

818.246-0125



ՊԱՏՄԱԿԱՆ

«ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐ»Ի ՇԱՐՔԻՑ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Ա.Ի. ՔՀՆՅ. Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ-ԲԱԼԱՅԵԱՆ

ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

Հայաստանեայց Առաքելական տիպար եկեղեցի ունենալուց զուրկ էր դադուհանաճայ գաղութը: Այդ իսկ պատճառով չկար նաեւ եկեղեցական երգչախումբ: Նախկին ծխատէր ծերունազարդ Տ. Եզնիկ քահանայն ստարիներին հնարաւորութիւն չուներ Կիրակի եւ տօնական օրերին Ս. Պատարագ մատուցանելու: Ղազուին հասնելուն պէս, հրաւիրեցի դպրոցի երգի դասատու՝ Զօրա Բժշկեանին, դպրոցականներից կազմելու երգչախումբ: Երկու սենեակից բաղկացած մեր աղօթավայրը բնաւ յարմար չէր եկեղեցու համար: Համայնքը տրամադիր էր ունենալ մի պատշաճ եկեղեցի: Ժողովներում եւ առօրեայ խօսակցութիւններին ընթացքում, միշտ էլ խօսուում էր եկեղեցի կառուցելու խնդրի մասին: Սակայն քչերն էին գործնական քայլերի մասին խորհում: Ամէն Կիրակի, աղօթավայրում քարոզում, խօսում եւ յորդորում էի գործնական քայլեր վերցնել այդ ուղղութեամբ:

Երբ Թաւրիզից Ղազուին էի գալիս, Սրբազան Մեղիք Թանգեանն ասաց. «Նորընծայ, աշխատիր առաջին հերթին Ղազուինում մի փառաւոր եկեղեցի կառուցել»: Սրբազանի այդ խօսքերը միշտ հնչում էին ականջներին մէջ: Եկեղեցի ունենալու իմ յորդորները դիւր չէին գալիս մի քանի անհատների, որոնք մինչեւ իսկ համարձակուեցին Սրբազանին նամակ գրել, որ նորընծայ քահանայն դռնէ դուռ ընկած ժողովրդին ճնշման տակ է դրել, եկեղեցի կառուցելու համար: Թէ ինչ վնասակար գործ էր իմ արածը, դա յայտնի էր միայն մի քանի մոլորեալներին:

ՂԱԶՈՒԻՆԻ ԲԱՐԵՐԱՐ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Ղազուին ժամանումից մի քանի ամիս անց, մտերմացայ մի շարք ազգայինների հետ: Նրանք էլ փոխադարձաբար սիրում ու յարգում էին ինձ: Այդ անկեղծ յարաբերութիւնները գնալով աւելի սերտանում ու ամրանում էին: Ամէն աւիթով, ամէն տեղ խօսում ու առաջարկում էի եկեղեցի կառուցելու մասին: Վստահ էի, որ պիտի յաջողեմ իմ աստուածահաճոյ առաքելութեան մէջ, եւ Ղազուինը պիտի ունենայ իր փառաւոր եկեղեցին, որն պիտի դառնայ Լուսաւորչի կանթեղի անմար լոյսի շտեմարան եւ ժողովրդի լոյսի-լոյսի ապակէն ու ամրոց: Այս ըմբռնումով ամենուր քարոզներն մէջ խօսում էի այդ մասին: Ղազուինահայ մի քանի ունեւորներ մտածում էին յանձն առնել եկեղեցու շինութեան ծախսը, որն 1934 թուին, մի պատկառելի գումարի էր հասնում, շուրջ՝ 80,000 ռիալ: Բնիկ իզգիւրի՝ Յովհաննէս Բարսեղեանը, որն արժանաւոր գաւակն էր նահապետական մի ընտանիքի, սրտանց կապուած էր մեր դպրոցին եւ ազգային կեանքին: Այն օրերին նա ունէր 4-5 հատ «Ման» գերմանական բեռնատար ինքնաշարժ, այդ պատճառով ժողովուրդը նրան «Ման» Յովհաննէս էր կոչում: Յովհաննէս Բարսեղեանը ունէր 3 գաւակ՝ Հոփսիսիկ, Մանուկ եւ Անահիտ: (Յիշեմ այստեղ, որ 1946 թուին, Յ. Բարսեղեանը ընտանեօք փոխադրուեց Մայր Հայրենիք: Այնտեղ նշանակուեց Երեւան քաղաքի

երթեւեկութեան մի բաժանմունքի վարիչ: 1957 թուին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա., իմ միջամտութեամբ եւ առաջարկով նրան պարգեւատրեց Ս Գրիգոր Լուսաւորչի շքանշանով, որպէս բարերի: Յ. Բարսեղեանը վախճանուեց Երեւանում եւ թաղուեց մեծ շուքով: Իսկ նրա միջնեկ որդին՝ Մանուկը, աւարտելով Երեւանի բժշկական Համալսարանը այսօր որպէս ուռուցքաբան յայտնի է ամբողջ Հայաստանում): Ղազուին ժամանման հենց առաջին օրերից, Յովհաննէս Բարսեղեանը կապուեց ինձ հետ առանձնալատուկ սիրով: 1934 թուի Հոկտեմբերին Յովհաննէսի հետ, իր սեփական ինքնաշարժով մեկնեցինք Թեհրան եւ իջեւանեցինք իր բարեկամներ՝ Խեչօ եւ Շուշանիկ Աղամբանների մօտ, որոնց ջերմ հիւրընկալութիւնը չպիտի մոռանամ: Այն օրերին Թեհրանի հայ գաղութը փոքր էր եւ սակաւաթիւ: Համայնական Խորհրդի նախագահն էր դոկտ. Վարդան Յովհաննիսեանը, որն ազնիւ մի անձնաւորութիւն էր: Եկեղեցու այն օրերի դպրապետ՝ Արտաշէս Գարագաշի հետ, այցելեցի դոկտ. Վ. Յովհաննիսեանին, որն մեզ ընդունեց չափազանց սիրալիր: Նա անմիջապէս առաջարկեց որ յառաջիկայ Կիրակի (Հոկտ. 7, 1934 թ.) Ս. Պատարագ մատուցեմ Թեհրանի Ս. Գէորգ եկեղեցում: Պատարագեցի եւ քարոզեցի «Հոգի քո բարի առաջնորդեցի» բնաբանով: Այս առթիւ Թեհրանի «Ալիք» թերթի Նոյ. 30-ի թւում, մի թղթակցութիւն լոյս տեսաւ «Թեհրանցի» ստորագրութեամբ:

Այդ օրուանից ինձ Թեհրան փոխադրելու հարցը օրակարգի վրայ մնաց, սակայն ես միշտ կապուած մնացի Ղազուինահայ գաղութին եւ չթողեցի Ղազուինը:

Այնուհետեւ, մի քանի անգամ Թեհրանում եւ Ղազուինում հանգիպեցի դոկտորին եւ նա միշտ էլ յիշեցնում էր իմ Թեհրան փոխադրուելու հարցը, սակայն ես մերժողակա նպատասխան էի տալիս եւ աւելացնում «Սիրելի դոքտոր, մի քիչ էլ սպասե՛ք, կեանքում վերիվայրումներ շատ եմ ունեցել, սակայն Ղազուինում ես ինձ գտնում եմ իմ հարազատ տան մէջ: Այնտեղ ես ունեմ մեծ թւով բարեկամներ, որոնց միջոցով ուզում եմ կենդանացնել գաղութը եւ եկեղեցի կառուցել»:

ՂԱԴԻՄԱՐԱՆ ԳԻՒԴԼ

Ղազուինից եօթը քիլոմետր հեռաւորութեան վրայ, հարթ մի դաշտավայրում է գտնուում Ղազուինաբաղ գիւղը, որտեղ ապրում էին նաեւ 45 հայ ընտանիքներ, որոնք բոլորն էլ եկել էին Ղարաղան գաւառից եւ զբաղուած էին երկրագործութեամբ: Ղազուինահայութեանց զբօսավայրերից էր այդ գիւղը: Տօնական եւ մասնաւորապէս Համբարձման տօնին, հայերը խումբ-խումբ, բեռնատար մեքենաներով, կառքերով, գնում էին գիւղ եւ կանաչազարդ այգիներում հնչում էր դհուլ-գուռնան եւ «Ջան գիւլումը»:

Գիւղի երիտասարդուհիները գոյնզգոյն հագուստներով, խառնուելով քաղաքացիների հետ, պարում էին մինչեւ ուշ գիշեր: Ամենուր կերուխում էր ու հայկական քէֆ: Տեղացիները հայկական մատուցարաններով ուտելիքներ էին բերում այգի եւ հիւրասիրում բո-

Շարունակուած էջ 14-էն

քանի մը բառերով կացութիւն, միջավայր-մթնոլորտ ստեղծելու կարողութեան: Արդէն ան բացայայտած է ինքզինք յայտարարելով, «Ես տուամ կը տեսնեմ ամէն ինչի մէջ, որովհետեւ տուամ կայ ամէն ինչի մէջ, եւ նոյնիսկ՝ անձին մէջ»:

Ուրեմն թատերական սարոյցեանական բնագոյն էր որ ազատ ասպարէզ գտնելով Նիւ Եորքի թատերական դրախտ հանդիսացող Պրոտոչէի բեմերուն վրայ կը նուաճէր բազմութիւնները, անճկրումի մատնելով քարացած մտայնութեան տիրացած թատերական քննադատներն ու մեկնաբանները:

Արդարեւ «Իմ Սիրտը Լեռնեցում է» նոր շունչ, նոր հայեցողութիւն եւ նոր մեկնաբանութիւն կը բերէր ամերիկեան բեմին: Շունչը ծայրահեղ քնարականութիւնն էր, հակառակ այն երեւոյթին որ բեմ բերուած կեանքը դառն առօրեան էր, աշխարհը անարդարութեամբ յրփացած, կարծրացած աշխարհն էր ու հերոսները բառացիօրէն աւուր հացի կարօտ ծընակներ էին: Բայց անկից վտարուած էին յոռետեսութիւնն ու յուսալքումը: Որովհետեւ Սարոյցեան յաջողած էր բանաստեղծական ֆանթազիան եւ Հիւմբըրը միախառնել իրականութեան պատկերացումին մէջ, առանց բնաւ սակայն նշույ մը գիշելու իր անուղղակի քննադատական միտումէն, որ կը կայանար ցոյց տալու թէ ինչպէս մարդու գեղեցկութեան ծարաւն ու տենչը կ'արգելակուէին կեանքի ժխտական պայմաններով, պարզ ձեւով՝ հացի կարիքով ու պաշարով: Դարձեալ կենսագրական ատաղձի վրայ հիւսուած է պատմութիւնը եւ փոխաբերաբար, խորհրդանշակաւ նօրէն կը կենդանացնէ իր հօր տիպարը, որ եղած է առաւելապէս հոգեկանով եւ բանաստեղծութեամբ ապրող վիպապաշտ ուսմանթիք մը, եւ չէ կրցած յարմարիլ նիւթապաշտ կարծր աշխարհին: Իսկ ծոնին Սարոյցեանի մանկութիւնն իսկ է, այլաբանական ձեւով վրձինուած: Նիւթականի եւ հոգեկանի բախումը տրուած է խորհրդապաշտական ուժգին թելադրականութեամբ:

Այս առաջին յաջողութեանէն քաջալերուած, Սարոյցեան բեմ կը բարձրացնէ իր երկրորդ թատերական երկը՝ «Ձեր Կեանքին Օրերը» յատկանշական խորագիրով որ իր կարգին, կը գտնէ մեծ ընդունելութիւն: Անոր կը տրուի Փուլիճերի նշանաւոր մրցանակը, բայց Սարոյցեան կը մերժէ ընդունիլ գալն, առարկելով որ առեւտրական արժեքափերը գործ չունին գրականութեան եւ արուեստներուն հետ: Տասնամեակներ յետոյ, աշխարհահռչակ գրող եւ փիլիսոփայ ժան Փոլ Սարթր, նոյն հրապարակային մերժումին պիտի արժանացնէր Նոպելեան գրական մրցանակը, նոյն վերապահութիւններով: Անմիջապէս յետոյ Սարոյցեանի նոր երկը կ'արժանանար թատերական Քննադատներու Ամե-

րիկեան Ընկերութեան տարեկան մրցանակին գոր այս անգամ կ'ընդունէր ան: Բացառիկ երեւոյթ էր որ նոյն գործին շնորհուէին երկու այս համբաւաւոր մրցանակները:

«Ձեր Կեանքին Օրերը» ալ նորութիւններու եւ նորարարութեան բարիքներով օժտուած թատերական իրագործում մը հանդիսացաւ: Նախորդէն տարբեր, աւելի ընդլայնուած իր չորս արարներով, ձեւով մը ան կը միտէր այդ օրերու ամերիկեան բարեխառնութիւնն ու դիմագիծը սեւեռել միշտ խորհրդապաշտական այլաբանութեամբ եւ քնարական շունչով: Դարձեալ հերոսները հանդիսացան մեծ մասամբ լուսանցքի վրայ ապրող խոնարհ, ընչազուրկ եւ գործազուրկ տիպարներ, որոնք եկան բնակեցնելու բեմայարթակը՝ այս անգամ զգալի ձեւով ընդլայնուած՝ տեղ տալու համար միանգամայն քանի մը տիպարներու ինքնաբացայտումի գործընթացին: Մէկ բեմ՝ գիրար խաչաձեւող, բայց նաեւ գիրար ամբողջացող քանի մը շրջանակուած, տարբեր գործողութիւն: Իսկ այդ ընդլայնուած բեմը Ամերիկան կը ներկայացնէ այլաբանօրէն պառ-սր-ճարան-պարասրահի վերածուած: Մասնաւոր ընդգծուած դէպքեր ու գործողութեան ընթացք չկար, այլ կար մթնոլորտ-միջավայր, ուր գանազան տիպարներ՝ անգործ շրթնադաշնակ նուագողը, կատակաբանը, պարողը, սիրահար գոյգը, փողոցային աղջիկը, նաւաստին, զինեմոլը, լրագրավաճառ տղեկը, ոստիկանը եւ բարձր խաւի ամոլը հերթով եւ առանց հերթի կը տողանցէին պարմէնին եւ գլխաւոր հերոս, բարեսիրտ բարերար ճոյնն առջեւ, պահիկ մը հոգեպէս կը հանդերձագործուէին եւ կը պարզէին իրենց մտահոգութիւններն ու հարցերը, որոնց ամբողջութիւնը Ամերիկեան բարքերու եւ կացութեան համայնապատկերը կը ներկայացնէր: Փիէսը քառասուն հինգ շաբաթներ անխափան ներկայացուեցաւ, իր հռչակի գազաթնակէտին հասցնելով Սարոյցեանը:

Իր այս հակիրճ պարունակին մէջ կարելի չըլլալով մանրամասն անդրադառնալ Սարոյցեանի վիթխարի ամբողջական գրական ժառանգութեան, կը գոհանանք այս սեղմ վերլուծականով, եւ կը շեշտենք յոյժ կարեւորութիւնը, հանճարեղ գրողին ծննդեան այս հարիւրամեակին, ազգովին գանելու միջոցառումներ, կարենալ ձեռք ձգելու համար Սարոյցեանի անտիպ ժառանգութեան ազատ կացուցանումը, որպէսզի անոնց տպագրութիւնը ապահովուի եւ սեփականութիւնը դառնայ իր ժողովուրդին, ամերիկեան գրականութեան եւ համայն մարդկութեան: Հանճարները չեն կրնար սեփականութիւնը նկատուիլ որեւէ հաստատութեան կամ հիմնարկութեան: Ոչ ոք իրաւունք ունի մարդկութիւնն ու հայութիւնը գրկելու Սարոյցեանի նման հսկայի գանձերուն վայելքէն եւ հպարտութենէն:

Իսկ տօնական օրերին, այցելում էի գիւղը, Պատարագ մատուցում եւ տները օրհնում: 1945-46 թուերին Ղազուինաբաղի հայութիւնը միատեղ մեկնեց Մայր Հայրենիք: Գիւղում, բլուրի վրայ մնաց հայոց գերեզմանատունը, որին այցելում եմ տարին մի քանի անգամ եւ հոգեհանստեան արարողութիւն կատարում: 1934 թուին մի յօդուած գրեցի Ղազուինաբաղ գիւղի հայութեան մասին:

լորին: Առատօրէն հոսում էր գինին ու օղին: Գիւղում հարսանիքները տեւում էին 3 օր ու գիշեր եւ աշնան ամիսներին, երբ դադարում էին շինականի աշխատանքները: 1940-41 թուերին մեր նիւթական եւ բարոյական օժանդակութեամբ երկու սենեակներ կառուցեցինք եւ թիւղում, թէ որպէս աղօթավայր եւ թէ՛ դպրոց: Ղազուինից ուղարկեցինք մէկ ուսուցիչ, հայ գեղութիւնների հայոց լեզու սովորեցնելու համար:

Ի ՅՈՒՇ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Շարունակում է էջ 13-ին

կը տարածուէր 47 տարեկան երիտասարդ Հայրապետին առջեւ: Ընտրութենէն մի քանի օրեր ետք Վազգէն Հայրապետ կատարեց ինը եպիսկոպոսներու ձեռնադրութիւնը եւ մանաւանդ իր առաջին Միւռոն-նօրհնէքը Հոկտ. 16-ին որմէ երեսուն տարիներ զրկուած էին հայ եկեղեցին ու ազգը, քանի որ վերջին միւռոնը օրհնուած էր 1926 թուին Գէորգ Ե Սուրբնեանց կաթողիկոսի ձեռամբ: Սովետական կարգեր արգելք հանդիսացած էին խորհրդային Միւռոնը օրհնուած էր 1926 թուին Գէորգ Ե Սուրբնեանց կաթողիկոսի ձեռամբ: Սովետական կարգեր արգելք հանդիսացած էին խորհրդային Միւռոնը օրհնուած էր 1926 թուին Գէորգ Ե Սուրբնեանց կաթողիկոսի ձեռամբ:

Հաւասարակշռութեան բացառիկ ձիրքով, կազմակերպուած փայլուն միտքով, նուիրումով եւ իրեն յատուկ լաւատեսութեամբ Վազգէն Ա իր յառաջիկայ հայրապետական գործերը հինգամեակներու յաջորդակա-նութեամբ եւ նախապատուութեան կարգով լրջօրէն եւ հիանալի կերպով դասաւորել գիտցաւ, եւ ամէն գործ, սկսած աղօթքով, գտաւ իր յաջող ելքը, հնգամեակ առ հնգամեակ, առանց բացառութեան թէ՛ Մայր Աթոռէն ներս եւ թէ՛ աշխարհասփիւռ թեմերէն ներս ուր անձամբ տանէ աւելի Հովուապետական աննախընթաց այցելութիւններ շնորհեց:

Իւրաքանչիւր հինգ տարի գտաւ իր բովանդակալից արդիւնքը ամէն մարզէ ներս, հոգեւոր, վարչական, թեմական, ուսումնական, շինարարական, միջ-եկեղեցական, պետական, միջազգային, գեղարվեստական, հրատարակչական, մշակութային, բոլորն ալ հերթական կարգով՝ տարածուած ութը համահաւասար հնգամեակներու վրայ: Թերեւս Հայրապետը ինք չնկատեց այս կազմակերպեալ յառաջընթացը իր սրբազան գործերուն, սակայն եւ այնպէս պատմութեամբ զբաղող մը երախտիքով պիտի գար հաստատելու զայն:

Վազգէն Հայրապետ, ինչպէս ինք սովոր էր ըսել, եղաւ «Հայ եկեղեցւոյ առաջին սպասաւորը», որ իր ընթացքով եւ բազում իրագործումներով մօտեցուց իր ցրուեալ հօտը Ս. Էջմիածնին, ինք անձամբ մօտենալով իր հօտին, եւ պատուով ու փառքով ներկայացնելով Հայ եկեղեցին օտար աշխարհին: Դիւանագէտի իր թաքուն առաքինութիւնը զինք դարձուց օրուան մարդը, որ կրցաւ դժուարին ժամանակներու մէջ ամէն ձեռնարկ յաջողցնել յաչա խորհրդային իշխանութեանց ու Հայրենի պետութեան:

Իրեն նկատմամբ պետական անձերուն ցոյց տուած պատկառանքն ու յարգանքը բնական երեւոյթներ եղան, եւ երբեք բռնազբօսիկ, որովհետեւ Վազգէն Ա գիտէր լսելու եւ խօսելու ժամանակը, զգայուն էր կացութեանց նկատմամբ, եւ խնդրելու ու ստանալու, եւ երբեք չմերժուելու ականածանքը կը վայելէր անայլալ լաւատեսութեամբ, համբերութեամբ եւ հաւատքով:

»Պատուած փնտրելու իր ճանապարհին վրայ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը գտեր էր«, ինչպէս ինք յաճախ կ'ըսէր: Յանուն Ս. Էջմիածնի եւ Հայոց Ընդհանրական Հայրապետութեան ու անոր հեղինակութեան, Վազգէն Հայրապետ եղաւ մեր ժամանակներու կառուցող Հայրապետը: Վանական համա-

լիրը բոլորովին պայծառակերպուեցաւ՝ շնորհիւ իր մտաւորականի եւ արուեստագէտի բարեմասնութեանց: »Խորհրդային Միւռոնը վերանորոգուեցան: Բարերարներ անպակաս եղան, տեսնելով իրական դիտապետը Հայոց որ իր զգուշաւոր իմաստութեամբ կը յառաջդիմէր, քայլ առ քայլ, թէ՛ հոգեւոր եւ թէ՛ շինարար իր ծրագիրներուն մէջ միշտ մնալուն յաջողութիւն արձանագրելով:

Առաջին իսկ օրէն, 1956-ին, Հայրապետը իմաստութիւնը ունեցաւ հոյլ մը ճարտարապետներով յատուկ եւ մնալուն յանձնաժողով մը կազմել, ատենապետութեամբ յայտնի ճարտարապետ Վարազդատ Յարութիւն-եանի, յանձնախումբ մը որ աւելի քան 35 տարիներ մնաց Հայրապետի կողքին, հաւատարիմ ու տաղանդաւոր անձինք բոլորն ալ, սկսելով 1957 թուի վեհարանի ազատագրումէն եւ վերակառուցումէն, մինչեւ այն օրը՝ 1990 Մարտ 31, երբ Վազգէն Ա օրհնեց հիմնաքարը Երեւանի յոբելինական Մայր եկեղեցւոյ, յարատեւ աշխատելով որ տաճարին նախագիծը ըլլար կատարեալ ու ինք անձամբ վաւերացնէր ճարտարապետ Ստեփան Քիւրքեանի նախագիծը 1992 Օգոս. 29-ին, իր վախճանումէն ճիշդ երկու տարի առաջ, որպէս վերջնական նախագիծ, ներկայացուած աւելի քան 22 տարբեր յատակագիծներու շարքին:

Հայոց ծերունագարը Հայրապետը մարգարեաշունչ հետեւեալ խօսքերով օրհնեց հիմնաքարը Հայ եկեղեցւոյ քրիստոնէութեան 1700-ամեայ Մեծ Դարձի նախօրէին կանգնուելիք Մայր եկեղեցւոյ հողին վրայ:

»Իմ հայեացքը ուղղելով դէպի մօտ ապագան, մօտ տաս տարի յետոյ, իմ հոգու աչքերով տեսնում եմ այն հոյակապ տաճարը որ պիտի բարձրանայ այստեղ, եւ սուրբ խաչը պիտի սլանայ դէպի երկինք: Հաւանաբար ես այստեղ չեմ լինելու, բայց գուցէ կը յիշէք ինձ այդ օրը«:

Ինչպէս չի լինել երախտարժան Հայրապետը: Կարելի էր Վազգէն Հայրապետի կատարած ամէն մի գործ՝ »աննախընթաց« նկատել, երբ ականատես կ'ըլլայինք իր արտասահման կատարած հովուապետական այցելութիւններուն, եւ կամ երբ մենք Մայր Աթոռ կ'այցելէինք: Ատլանտ-եանի եւ իտալադակնի փերուսն հասնող առաջին Հայրապետը եղաւ ան, եւ յիշելի մի քանի սերունդներու իրական Հայրապետը գոր անձամբ տեսնելու եւ աջը համբուրելու բախտը ունեցան:

Օտար եկեղեցական պետեր ի'ր օրով միայն սկսան պաշտօնական այցելութիւններ տալ Մայր Աթոռ, որոնց ինք անձամբ այցելէր էր, Վատիկան, Անկլիկան եկեղեցւոյ Լոնտոնի Լամպէթի պալատը, Կ. Պոլսոյ Տիեզերական Ուղղափառ պատրիարքութիւնը, եւ կամ Հնդկ մալապար եկեղեցւոյ կաթողիկոսարանը, Գահիրէի Ղպտի Ուղղափառ եւ Եթովպիոյ Ուղղափառ պատրիարքութիւնները առանձինն, իր արտասահմանեան այցելութեանց ընթացքին, կանոնաւորաբար, ընդունուելով ամենայն պատշաճութեամբ ու Հայոց Հայրապետին վայել պատկառանքով, թէ՛ հոգեւոր պետերէն եւ թէ՛ մանաւանդ քաղաքական ղեմքերէն:

Որպէս վարչագէտ Հայրապետ,

Վազգէն կաթողիկոս կազմակերպեց վանական կեանքը, բարձրացուց մակարդակը ձեռնարանին, հրատարակեց »Էջմիածին« ամսագիրը կանոնաւոր կերպով ու կրօնագիտական եւ բանասիրական լուրջ ուսումնասիրութիւններով, ձեռնադրեց 65 եպիսկոպոսներ, կատարեց եօթնամեայ վեց Միւռոն-նօրհնէքներ, գրեց յատուկ կանոնագրութիւններ քրիստոնէական համար, հաստատեց արտասահմանի եօթը նոր թեմերը՝ Աւստրալիոյ, Պրագիլի, Ուրուկուայի, Գանատայի, Գերմանիոյ, Կեղերական Եւրոպայի, Զուրիցերիոյ, ինչպէս նաեւ Հայաստանի 1991-ի անկախութենէն անմիջապէս ետք հայրենի պատմական թեմերը սկսաւ վերականգնել՝ Գուգարքի, Սիւնիքի, Արագածոտնի, Արմաւիրի, Արցախի եւ Կոտայքի, որոնք իր յաջորդին՝ Գարեգին Ա Երջ. Հայրապետի ձեռքով պաշտօնապէս հռչակուեցան:

Վազգէն Հայրապետ պատմական քայլեր եւս առաւ երբ 1962-ին ընդառաջելով Եկեղեցեաց Համաշխարհային Խորհուրդի հրաւերին, անձամբ Զուրիցերիա այցիելաւ ուր պաշտօնական դիմում ներկայացուց Հայ եկեղեցւոյ անդամակցութեան համար Եկեղեցեաց Խորհուրդին: Նոյն տարուան Օգոստոսին Կեղերական Խորհուրդը ընդառաջելով հայրապետական դիմումին Հայաստանեայց եկեղեցին որպէս անդամ ընդունեց Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին:

Ան յաջորդ տարին, 1963-ին Երուսաղէմ մեկնեցաւ առաջին անգամ ըլլալով ու իր Հայրապետական հրաւերով համագաղթին յանձնաժողով մը գումարեց իր նախագահութեամբ ձեռնարկելու համար Ս. Յարութեան Տաճարի մեծածախս վերանորոգութեան, որուն մէկ երրորդը կ'իյնար հայոց պատրիարքութեան վրայ: Տաճարը վերանորոգուեցաւ ըստ ծրագրի ու լրացաւ իր ժամանակին ի պատիւ Երուսաղէմի երեք պատրիարքութեանց, ընդ որս եւ հայոց Սրբոց Յակոբեանց պատրիարքութիւնը:

Վազգէն Հայրապետ անգամ մը եւս Երուսաղէմ այցելելով կատարեց բացումը ժառանգաւորաց Վարժարանի նոր շէնքին, եւ 1968-ին յատուկ հրաւերով Ամերիկայի Արեւելեան Թեմի առաջնորդին, Հայրապետը Նիւ Եորք ժամանեց օծելու համար քաղաքի հոյակապ Ս. Վարդան Մայր Տաճարը: Կասկած չկայ որ իր հովուապետական այցելութիւնները աշխարհի չորս ծագերուն, Միջին Արեւելք, Եւրոպա, Հնդկաստան, Հիւսիս եւ Հարաւ Ամերիկաներ ու ներքին թեմեր, առաւել եւս վերականգնացան ու աշխոյժ դարձան իրենց առաքելութեան մէջ: Քրիստոսի աւանդն ու հայ ժողովուրդի մշակութիւնը Հայրապետի խօսքերուն մէջ փայլեցան ընդմիշտ, զիրար լրացնելով եւ իրարու զօրակից դառ-

նալով: Հայրապետը Ամերիկահայ թեմերը կրկին այցելեց 1987 թուին, եւ վերջին անգամ մըն ալ կարճ այցելութեամբ 1989 Յունուարին Նիւ Եորք ժամանեց Հայոց Հայրապետը այս անգամ կակիծը սրտին երկու ամիս առաջ պատահած Հայաստանի համատարած երկրաշարժի աղէտին հետեւանքով կազմակերպելու համար համագաղթին հանգանակութիւն բարձրագոյն մակարդակի վրայ: Եկան հիւսիսէն ու հարաւէն, Եւրոպայէն ու Միջին եւ Ծայրագոյն Արեւելքէն ձեռք երկարելու Հայոց Հայրապետին որ իր աղօթքը վերջին անգամ միահամուռ բարձրացուց առ Աստուած Ս. Վարդան մայր տաճարին՝ մէջ արցունքը աչքերուն:

Հայ եկեղեցւոյ միասնակա-նութիւնը Ս. Էջմիածնի հոգեւոր առաջնորդութեան ներքեւ եղաւ ու մնաց Հայրապետին սրտին ու մտքին առանցքը, հակառակ տեղի ունեցած բաժանումներուն եւ հայրապետական մի քանի թեմերու գրաւումներուն Կիլիկիոյ Աթոռին կողմէ, որոնց համար անվերջ հրաւեր կարգաց սիրոյ եւ կանոնի, իրաւասութեան եւ հեղինակութեան ուղին ցոյց տալով: Վազգէն Հայրապետ մնաց իր բարձրագոյն դիրքին վրայ աներեր, անվարան, վճռակամ եւ միշտ յուսալից, մինչեւ իր վախճանը:

Մտահոգուեցաւ նաեւ Երուսաղէմի ներքին խնդիրներով եւ միշտ իր պարտքը նկատեց հակել եւ ի հարկին միջամտել, ինչպէս պատահեցաւ 1967 թուին երբ 23 թանկարժէք ձեռագիրներ յանկարծ աճուրդի կը հանուէին Լոնտոնի մէջ: Իր ազդեցիկ ու վճռակամ սաստը հասցուց Երուսաղէմ, գտաւ պատասխանատուները, գտաւ նաեւ ճիշդ անձերը որոնք քննեցին, վնասուց հատուցումը կատարեցին ու փրկեցին ձեռագիրները ստոյգ կորուստէ:

Վազգէն Հայրապետի գերեզմանը կը կնքենք անվարան գրելով սա տողերը. Յուսահատիլ չզգիտող եւ բարին կամեցող ու կատարող Հայրապետը եղաւ ան երբ 1994 թուի Օգոստոս 18-ին, դիմաւորելէ ետք նորանկախ Հայաստանի Հանրապետութիւնը, եւ կատարելէ ետք իր վերջին Անկախութեան Միւռոն-նօրհնէքը 1991 թուին, ստանալէ ետք Հայաստանի Հանրապետութեան Հերոսի պատուոյ նշանը, որպէս առաջին քաղաքացին նորանկախ Հանրապետութեան, փակեց իր աչքերը առ յաւէտ յետ երկարատեւ հիւանդութեան, հանդիսանալով հայոց պատմութեան վերջին շրջանի ամենէն կարկառուն ղեմքը, որ իր բազմարդիւն եւ անմնացորդ կեանքը կնքեց, խղճի մտօք կատարելագործելով ամէն ինչ որ իր համոզումովն ու դատողութեամբ արժանի էին կատարուելու ի փառս Աստուծոյ եւ հայ ազգին:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA

ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ՓԻՆԻԿ ԳԼԽԱԴՈՐՈՒՄԵՆ ԱՂԻՄԱԿԸ

Ֆուտպոլի Հայաստանի առաջնության 21-րդ տուրի կենտրոնական հանդիպումը կայացավ Աբովյանի քաղաքային մարզադաշտում, որտեղ մրցեցին մինչ այս մրցաշարային աղիւսակը գլխավորով 2 թիմերը՝ «Արարատ»ը եւ «Փիւնիկ»ը: 43-ական միաւոր վաստակած այս ակումբները ընթացիկ առաջնութիւնում ախոյեանութեան գլխավոր չաւանդորդներն են եւ հենց նրանց մրցավէճում յաղթողը դառնում էր միանձնեայ առաջատար:



Հանդիպումը անցավ հաւասար եւ լարուած պայքարում: Ի վերջոյ, յաջողութեան հասան «Փիւնիկ»ի խաղացողները, որոնք հաշիւը բացեցին 70-րդ րոպէին: Արթուր Եղիգարեանի երկար փոխանումից յետոյ Գէորգ Ղազարեանը տիրելով գնդակին դիպուկ հարուած կատարեց: Յաղթելով 1:0 հաշուով «Փիւնիկ»ը 46 միաւորով դարձավ միանձնեայ առաջատար: Հայաստանի նախորդ 7 տարիների անփոփոխ ախոյեանը լուրջ յայտ ներկայացրեց 8-րդ անգամ անընդմէջ նուաճելու ախոյեանի կոչումը:

Եւս մեկ կենտրոնական հանդիպում կայացավ «Հրազդան» մարզադաշտում, որտեղ մրցեցին նախորդ առաջնութեան փոխախոյեանը եւ բրոնզէ մեդալակիրը՝ «Բանանց»ը եւ «Միկա»: Այս խաղի առաջին կէսում դարպասի գրավումը չարձանագրուեց, իսկ ահա 2-րդ կէսը անցավ անհամեմատ գոլաւատ պայքարում: Նախ 63-րդ րոպէին «Բանանց»ի լեգեոներ Վիտալի Լեդնյովը անկիւնային խաղարկումից յետոյ կարողացավ գլխի դիպուկ հարուած կատարել: «Բանանց»ը մեծ ոգեւորութիւն ապրեց այս յաջողութիւնից, որը մարեց 12 րոպէ անց, երբ Դաւիթ Գրիգորեանի փոխանցումից յետոյ Անդրէյ Բուրդիեանը փորձելով հեռացնել գնդակը, այն ուղարկեց սեփական դարպասը: Թւում էր՝ հանդիպումը կ'աւարտուի խաղող ելքով, սակայն մրցավարի աւելացրած ժամանակահատուածի 3-րդ րոպէին Արտակ Դաշեանը մօտ 40 մեթրից անսպասելի հարուած կատարեց եւ անակնկալի եկած «Միկայի» դարպասապահ Սոսո Գրիշիկաշուիլին չկարողացավ որսալ գնդակը: Յաղթելով 2:1 հաշուով՝ «Բանանց»ը եւս միացավ բրոնզէ մեդալների համար պայքարող թիմերի շարքին:

Գիւմրիում «Շիրակ»ը մեծ դժուարութեամբ առաւելութեան հասավ «Կիլիկիայ»ի նկատմամբ: Հանդիպման ելքը վճռեց 55-րդ րոպէին «Կիլիկիայ»ի դարպասին նշանակուած 11 մետրանոցը, որը անվրէպ իրացրեց Անդրանիկ Բարիկեանը:

3-րդ հորիզոնական դուրս եկավ Կապանի «Գանձասար»ը, որը հյուրընկալվելիս 2:1 հաշվով առավելութեան հասավ «Ուլիս» նկատմամբ: «Արարատ» - «Փիւնիկ» 0-1
«Շիրակ» - «Կիլիկիա» 1-0
«Բանանց» - «Միկա» 2-1
«Ուլիս» - «Գանձասար» 1-2

21-րդ տուրից յետոյ մրցաշարային աղիւսակը ունի այսպիսի տեսք.

	Խաղ	Յաղ.	Հաւ.	Պարտ.	Կօլ	Կէտ
«Փիւնիկ» Երեւան	21	14	4	3	30-11	46
«Արարատ» Երեւան	21	13	4	4	33-16	43
«Գանձասար» Կապան	21	11	4	6	30-22	37
«Միկա» Աշտարակ	21	10	5	6	29-20	35
«Բանանց» Երեւան	21	9	5	7	27-20	32
«Ուլիս» Երեւան	21	5	4	12	15-25	19
«Շիրակ» Գիւմրի	21	4	3	14	12-29	15
«Կիլիկիա» Երեւան	21	2	3	16	15-48	9

Ֆուտպոլի Հայաստանի սուպերգաւաթը կրկին նուաճեց Երեւանի «Փիւնիկ»ը, որը «Հրազդան» մարզադաշտում 1:0 հաշուով առաւելութեան հասավ «Բանանց»ի նկատմամբ:

ԵՐԵՎԱՆԻ «ՄԻԿԱ»Ի ՖՈՒԹՊՈՒԼԻՍ ԱՐՄԵՆ ԲԱԲԱՅԵԱՆԸ ՀԱՆՂԵՍ ԿԸ ԳԱ ԼԻԲԱՆԱՆԻ ՀՍՍ ԹԻՍՈՒՄ

Երեւանի «Միկա»ի ֆուտպոլիստ Արմէն Բաբայեանը յառաջիկայ ամիսներին վարձավճարով հանդէս կը գայ Պէյքուծի ՀՄՄ հայկական թիմում, որը հանդէս է գալիս Լիբանանի առաջին լիգայում:



ՀՄՄ-ն ներակայումս ելուցի է ունենում Լիբանանի առաջին բաժանմունքում եւ պայքարում է բարձրագոյն խմբում հանդէս գալու համար: Այս նպատակը իրագործելու համար ակումբի ղեկավարները որոշել են ուժեղացնել թիմի կազմը եւ հրաւիրել են Արմէն Բաբայեանին: Կիսապաշտպանութիւնում հանդէս եկող այս ֆուտպոլիստը նախկինում հանդէս է եկել նաեւ Հայաստանի երիտասարդական հաւաքականում, իսկ նախորդ մրցաշրջանում «Արարատ»ից տեղափոխուեց «Միկա»:
ՀՄՄ-ն, որտեղ հանդէս կը գայ Բաբայեանը, հիմնադրուել է 1921թ.: Այն Լիբանանի ամենահին ակումբներից մէկն է, որտեղ ժամանակին հանդէս է եկել նաեւ Հայաստանի հաւաքականի հայտնի խաղացող Համլէտ Մխիթարեանը:

ՇԱԽՄԱՏԻ ԵՐՈՊԱՅԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ԱՐԾԱԹԷ ՄԵԴԱԼ ՍԱՍՈՒԷԼ ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆԻՆ ԲՐՈՆԶԷ ՄԵԴԱԼ ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐԵԱՆԻՆ

Աւարտուեց շախմատի Եւրոպայի պատանեկան առաջնութիւնը: Հայաստանի 23 ներկայացուցիչներից Չեռնոգորիայիում կայացած առաջնութիւնում մեդալի արժանացան 2 շախմատիստներ:



16 տարեկանների պայքարում արծաթէ մեդալի արժանացավ գրոսմայստերի նորմա լրացրած Սամուէլ Տէր-Սահակեանը: Այս տարիքային խմբում Սամուէլն իր վարկանիշով 2-րդն էր եւ համարում էր ոսկէ մեդալի ունել յաւակնորդ: Սամուէլը առաջին 4 տուրերում նոյնքան յաղթանակ տօնեց, սակայն յաջորդ 5 պարտիաները աւարտեց ոչ-ոքիներով: Վաստակելով 6,5 միաւոր՝ Տէր-Սահակեանը լրացուցիչ ցուցանիշներով դարձավ մրցանակակիր, քանի որ նոյնքան միաւոր էին վաստակել եւս 11 մասնակիցներ: Իսկ ախոյեանի կոչումը 8 միաւորով նուաճեց Ուկրաինայի ներկայացուցիչ Իլյա Նիժնուկը: Այս տարիքային խմբում Հայկ Վարդանեանը 6 միաւորով գրաւեց 14-րդ հորիզոնականը:

14 տարեկանների պայքարում բրոնզէ մեդալի արժանացավ Կարէն Գրիգորեանը, որը վաստակեց 7 միաւոր: Այս տարիքային խմբում 7,5 միաւորով ախոյեան դարձավ Ռուսաստանի ներկայացուցիչ Իվան Բուկալչինը: Գրիգորեանի յաջողութիւնը անսպասելի էր, քանի որ նա իր վարկանիշով այս տարիքային խմբում 35-րդն էր: Այս տարիքային խմբում 6 միաւորով 12-րդ հորիզոնականը գրաւեց Խաչատուր Երանեանը:
Մեդալին մօտ էր նաեւ աղջիկների պայքարում հանդէս եկած Սիրանուշ Ղուկասեանը (10տ.), որը 6 միաւորով հանգրուանեց 13-րդ հորիզոնականում: Հայաստանի միւս 20 ներկայացուցիչները աւելի ցածր հորիզոնականներ գրաւեցին եւ չկարողացան պայքարել նոյնիսկ լաւագոյն տասնեակում յայտնուելու համար:

ՀԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Շարունակուած էջ 8-էն

մական յատուկ յարաբերութիւններու հաստատումը:

Դոկտ. Քէշիշեան ջատագովեց խաղող համակեցութեան սկզբունքը ամենուրեք, ու վտանգաւոր գտաւ Ռուսաստանի դէմ լարուածութեան հրահրումը վրաստանի մէջ ուր Ռուսաստան կը պաշտպանէ Հարաւային Օսեթիոյ ինքնորոշման իրաւունքը: Աւելցուց, այսուհանդերձ, թէ իրենց ուրոյն շահերէն մեկնելով, բոլոր մեծ տէրութիւնները - ներառեալ Ռուսաստանը - փութացած էին մեզի յիշեցնելու թէ ազգային ինքնորոշման իրաւունքի կիրառելիութեան առնչութեամբ գուզահեռներ պէտք է փնտռել Հարաւային Օսեթիոյ եւ Հարաբարի կարգավիճակներուն միջեւ, եւ թէ վերջինի պարագային ի գորու կը մնայ տարածքային ամբողջականութեան «այլընտրանքը»...

ապագայ ամբողջական շրջափակման մը կարելիութիւնը կանխելու համար Հայաստան երեք այլընտրանքներ ունի - կա'մ գետնին տակէն երկար փապուղիներ փորել դէպի արտաքին լոյս աշխարհ, կա'մ փոխադրական վիթխարի օդանաւերու տիրանալ՝ Պերլինի շրջափակման ատեն Արեւմտեան Գերմանիոյ օրինակով, եւ կա'մ այլաւ յարաբերութիւններ հաստատել զրացիներուն հետ: Ան թելադրեց որդեգրել վերջին տարբերակը:

Քննարկումի վերջաւորութեամբ խօսք առին բազմաթիւ ունկնդիրներ, որոնք իրենց դիպուկ հարցումներով կամ արտայայտած գաղափարներով ամբողջացուցին եւ առաւել եւս արժեւորեցին երեկոյն: Ապա եղաւ պատշաճ հիւրասիրութիւն:

Մեր անկեղծ շնորհաւորութիւնները բոլոր կազմակերպիչներուն ու մասնակիցներուն՝ այս լուրջ նախաձեռնութեան համար, մաղթելով որ յառաջիկային աւելի մեծաթիւ ներկաներ օգտուին նման ձեռնարկներէ:

Ս.Թ.

ՔԱՉՆԱԶԱՐ
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:30
Կլէնտէյլի 280-րդ կայանից

Չեր Ծանուցումները Վաստեցեք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863

ՈՒՂԵԿՈՐՈՅՍ զՆԱՑՔԸ

Շարունակուած էջ 7-էն

տակաւ կը կրճատէ գիրենք անջատող հեռաւորութիւնը:

Ազատութեան հրապարակն է հիմա: Աչքերուն չի հաւատար: Անցած գիշերներու մղձաւանջէն ալ թանձր ու անհասկնալի է այս րոպէին աչքերուն առջեւ սարքուածը: Իսկ ի՞նչ կրնան ըլլալ եւ այսքան վաղ առաւօտուն ի՞նչ ընելու եկած են համազգեստաւորներու սա երկար շարքերը որոնք աքցանած են հրապարակի ամբողջ տարածքը: Զինուորներն են, ոստիկաններն: Կը դժուարանայ որակում տալ: Բայց անոնք գրեթէ անշարժ են, վերէն գալիք հրամաններու կը սպասեն: Ճիշդ այնպէս՝ ինչպէս վերջերս գինք հալածող դժոխային անվերջանալի երազի բթամիտ խամաճիկները: Բայց ի՞նչ գործ ունին անոնց շարքերուն արանքէն ազատօրէն խուժող սա սեւագոյն գայլատիպ դիմակաւորները՝ հրազէնները ձեռքերուն: Հրագէններու փողերէն բարկացայտ դուրս կը ժայթքէ մահապիլու կրակը: Առանց որեւէ վատ բան կանխատեսելու, Թաթուլ բնագոյաբար կը փորձէ հասկնալ թէ ի՞նչ ուղղութեամբ կը կատարուին կրակոցները: Հայեացքը կը դարձնէ թիրախին կողմը: Այրեր, կիներ: Ծերեր, տարեցներ, երիտասարդներ, պատանիներ: Բազմաթիւ պատառներէն երեւան կու գայ թէ նախագահական ընտրութիւններուն մէջ իշխանութիւններու գանգուածային գեղծարարութիւններուն ու բռնութիւններուն դէմ բողոքի խաղաղ հաւաք եւ նստացոյց մըն է որուն ձեռնարկած է ժողովրդային հոծ բազմութիւն մը: Ծատեր, տակաւին նոր արթնացած, դեռ խարխալելով դուրս կ'ելլեն գիշերանց հոն լարուած բազմաթիւ փոքր վրաններէն: Անորոշութեան շփոթը շեշտուած կերպով նշարելի է անոնց ամէն մէկ շարժման մէջ, իսկ սարսափը՝ աչքերուն խորը: Բացայայտօրէն պատրաստ չեն գինեալ այս երկոտանի գայլակերպերու կրակոցներով իրենց դէմ սարքուող ծպտեալ անսպասելի արշաւանքին: Ի վերջոյ, ո՞վ կրնայ միտքին ծայրէն իսկ անցընել այն անմտածելի թէ ոստիկաններ կամ բանտերէն բերուած քրէական գինեալ տարբեր կը համարձակին կրակել խաղաղ հաւաքի մը անգէն մասնակիցներուն վրայ:

Սակայն այնպէս դուրս կու գայ թէ՛ կը համարձակին կրակել: Կը համարձակին, քանի կրնան կուրօրէն գործադրել, սառնասիրտ վատութեամբ, վասն թիրտ ուժի ու փողի արձակուած, ոճրագործ նախագահի մը հրամանը: Դիւզագուններու օրրան եւ անձնուրաց ազատամարտիկներու ծննդավայր հայոց աշխարհի մէջ այսօր կան բորենիներ որոնք կրնան գազանօրէն յօշոտել ապրող ու շնչող քաղաքացի մը որ դեռ պատրաստ չէ պաշտպանելու ինքզինք: Որ դեռ կը յամառի միայն խաղաղ միջոցներով պաշտպանուիլ՝ անուղղայ ճիւղներու անտառային բիրտ ուժին դէմ:

Ապացոյցը՝ ահա, բազմութեան մէջէն դէպի երկինք բարձրանալ ձգնող աղեկաւոր ճիւղերը անոնց որոնց սիրտերը տրոփելի կը դադրին ընդմիջտ, որոնք արիւնաթաթախ կ'իջնան ցուրտ եւ անհիւրընկալ սալաշատակին վրայ: Խուճապն ու շփոթը կ'իջնան հրապարակի ամբողջ տարածքին: Տասնի շուրջ բողբոջակու ցուցարարներ անշունչ, արիւնլուալ ինկած են գետին: Անոնք այլեւս երբէք պիտի չկանգնին իրենց

ոտքերուն վրայ, երբէք պիտի չբալեն դարձեալ Երեւանի փողոցներով: Արիւնը կը պատէ բազմատասնեակ վիրաւորներու մարմինը, գլուխը, աչքերը: Համատարած աղմուկը, աղաղակն ու հեծեծանքը գետնին հպած շօշափելի սեւ ամպի նման կը ծփան մարդոց գլխավերեւը:

Ոստիկան մը սպառնալից ճօճելով կը մօտենայ Թաթուլին:

- Փախի, արա, հիմա քեզ կը սպանեն միւսների հետ:

Բայց այս ազդարարութիւնը գուտ հոետորական բնոյթ ունի, քանի իրենց դէմ խմբուած ոստիկաններու երեք խիտ շարքերը ներկաներուն կ'արգիլեն դուրս ելլելն ու փախուստը: Երեք շարքերուն ետեւը կանգնած են կիսագինուորական կապոյտ համազգեստով անծանօթներ որոնք ոստիկանները խաղաղ եւ անգէն ժողովուրդին ուղղութեամբ կը հրեն ու կը հրահրեն « Խփէք, ջարդէք դրանց » գոչելով բազմիցս:

- Ինչպէ՞ս փախնեմ, - սարսափած հարց կու գայ Թաթուլ, - սաղ տարածք փակել էք: Ոստիկաններն այնպէս շարուն են որ ճանճն անգամ չի կարող պրծնել:

Առաջին շարքի ոստիկանները, որոնց որեւէ իրաւասութիւն չէ տրուած ժողովուրդին արտօնելու որ փախչին, կարծես խուճապը աւելի եւս սրելու համար կը շարունակեն յանկերգել:

- Փախէք, հեսա ձեզ մորթելու ենք:

Ու կը շարունակուի անհատատալի ջարդը օրհասական թափով, մինչ ժողովուրդը կը ջանայ իր նօսրացած ուժերը մէկտեղել հրապարակի կեդրոնական մասը: Աղեկատուր լացն ու ճիւղերը կը տարածուին հրապարակի աւերուածութիւններուն վրայ՝ Թումանեանի եւ Սպենդիարեանի քարացած նայուածքներուն տակ: Թաթուլ լի լիշողութեան պատառին վրայ կայծակի արագութեամբ կ'անցնին անցեալին տեսած կարգ մը շարժանկարներու այն տեսարանները ուր Եւրոպայէն Ամերիկա ներխուժած « քաղաքակիրթ » բռնագաւթիչները, սանկ՝ գուարճութեան համար, մէկ առ մէկ նշանաւորութեամբ կը սպանէին « բարբարոս » ամերիկացիները: Ան չի կրնար հաւատալ թէ իր սեփական աչքերուն առջեւ հիմա իսկապէս, իրապէս կը շղթայագերծուին այս եղբերական ոճիրները հարագատ ժողովուրդի անմեղ կեանքերուն դէմ:

Թաթուլ անգամ մը եւս անսովոր զգացմունքը կ'ունենայ թէ անցեալ գիշերներու գարհուրելի երազմղձաւանջն է որ տեղափոխուած է՝ Ազատութեան հրապարակ անուամբ ճանչցուած այս լիշատակելի տարածքին վրայ: Ան էպէս կը շարունակէ այդ երազը: Կեդրոնացած ուշադրութեամբ ու յամբաքալ կը սկսի հետախուզել իր շուրջը ու գննել գետինը՝ գտնելու համար հակակշիռ տիկնաթելերու գլխաւոր հաղորդագիծերը որոնք իրարու կը կապեն հրագէնակիր գայլատիպ խամաճիկներն ու անոնց շարժումները հեռաձգարաւորող տիկնափարը:

Ոստիկանները կը խուժեն Թաթուլին վրայ՝ հրագէնները ուղղելով գիսախուլ գլխուն:

- Ի՞նչ ես փնտռում, շանորդի՛, - կը գոռան, - ասա՛ շուտ թէ որ կ'ուզես սաղ մնալ:

Բորենիներու մոլուցքով անոնք կը խոյանան իր վրայ: Երեսը վարձ գինք կը փռեն գետին: Առանց

դադարի կը խփեն գլխուն, կուրծքին, փորին, մէջքին, ձեռքերուն, ոտքերուն, նոյնիսկ ամորձիքներուն: Մօտ տասը ոստիկաններ հերթափոխութեամբ կը շարունակեն գինք ծեծել մօտ կէս ժամ:

Սաստիկ ցաւերու մէջ կը տնքայ Թաթուլի մարմինը որ գրեթէ ամբողջութեամբ գայն ծածկող արեան գոյնն ունի հիմա: Ապշահար ու գրեթէ ուշափոք, ան ոչինչ կը հասկնայ ըսուածներէն ու եղածներէն: Եշմած կը նայի գինք խոշտանգող ոստիկաններուն որոնց բուժ աչքերը արեան անկենդան ծովերու երեւոյթը ստացած են: Ոստիկանները անհամբեր կը պնդեն որ խոստովանի իրենց:

- Ես, - վարանտ կը կմկմայ Թաթուլ հագիւ լսելի ձայնով մը, - ես փնտռում էի խամաճիկներին կապուած հաղորդաթելերը: Նաեւ փնտռում էի տիկնափարը:

Բարկացայտ աչքերով լուռ իրար կը հարցուփորձեն ոստիկանները: Ա՛յ քեզ պատասխան, կը մտմտան անոնք: Եկ մի իմաստ դուրս արի էս անհասկանալի հանելուկից: Հաղորդաթելեր: Տիկնափար: Ի՞նչ է ցափոտում էս խեղկատակը:

Թաթուլի ետեւէն մօտ կէս ժամ առաջ գինք հետապնդող անծանօթը ոստիկաններու կողքին կանգնած է հիմա:

- Սուտ խենդ է ձեւանում, - գործին գիտակ ու յաղթական ժպիտով կը բացատրէ անոնց: - Նետէք աւտօ ու տարէք: Ես կը պատրաստեմ ամբաստանագիրը:

Նեխած մսակոյտի մը պէս, Թաթուլը անարգօրէն կը շարունակէ ինքնաշարժի մը մէկ անկիւնը ու կը փոխադրեն ոստիկանութիւն: Մինչեւ յետմիջօրէի սկզբնական ժամերը ան կը տնքայ իր ծանր վերքերու անամթքելի ցաւով: Կարճ ընդմիջումով մասամբ կը սթափուի կէսօրէ ետքը: Անբարտաւան քալուածքով խուցկն ներս կը մտնէ փոխ-ոստիկանապետը որ բարեգուլ ժպիտով մը դանդաղ կը մօտենայ իրեն - եւ, առանց կան-

խազուշացման, կը սկսի իր աջ կուռնկով խփել մարմնի բոլոր մասերուն: Հերթափոխութեամբ, խուճմը մը ոստիկաններ կը հետեւին իրենց առիւծասիրտ պետին: Ապա, ծեծն ու հարցապնդումները փոխնիփոխ կը յաջորդեն իրարու: Փոխ-ոստիկանապետը, այս անգամ լրջախոհ դիմախաղերով, դարձեալ կը մօտենայ իրեն ու՝

- Էս ամբաստանագիրը որ ստորագրուել է ականատես վկանների կողմից, բաւ է քեզ է՛ն քիչը տաս տարով մուլթ ու ցուրտ գնտանում պակագնելու համար:

Ու կը շարունակէ՝ քչիկ մը աւելի հաշտարար թոնով:

- Բայց մենք ուզում ենք օգնել քեզ: Մաքուր խիղճով քաղաքացու վայել դու մեզ հետ կը գործակցես, այն ատեն մենք էլ կ'ապացուցենք թէ իր օրինապահ քաղաքացիների հանդէպ որքան հոգատար ու ներող է մեր իշխանութիւնը: Տեսնո՞ւմ ես սա միւս փաստաթուղթը որ պատրաստել ենք քո օգտին: Էստեղ դու վկայում ես թէ, ընդդիմութեան պատուէրով, դու ուզում էիր հաղորդաթելեր հաստատել ու պայթեցնել պետական շէքները: Ստորագրի՛ր, եւ ազատ կ'արձակուես, կը պրծնես:

Թաթուլ գլուխը մերժողական կը շարժէ իր մնացած ամբողջ ուժով:

- Ես ո՛չ մի յանցանք գործած չեմ, - կը շշնջայ հագիւ լսելի ձայնով բայց հաստատակամ: - Եւ ինձնից՝ ո՛չ մի ստորագրութիւն:

Երբ գինք կը տանին գլխաւոր դատախազութիւն, Թաթուլի ծանր վէրքերն ու ցաւերը քննիչին կը ստիպեն դեղեր պատուիրել՝ գինք արթուն պահելու եւ հանդարտեցնելու համար: Ապա ոչինչ կը լիշէ ան, մինչեւ ուշքի գալը ժամանակաւոր կալանքի մեկուսարանին մէջ, ուր աւելի ետք, նոյն օրը հինգ անգամ շտապ օգնութիւն կը կանչուի՝ գինք ողջ պահելու համար:

Կէս գիշերէն քիչ անց Թաթուլ կը փոխադրուի իր բանտախուցը: Ուշաթափ կ'իջնայ պետոնէ սալաշատակին վրայ:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ 3ԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՅԸ
CHARTER CABLE 280-ՐԳ ԿԱՅԱՆ
(ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱՔՐԷՍԷՆԹԱ)
GLOBACAST SATELLITE
ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԱՆ 10:00-11:00

ՈՒՇԱԴՐՈՒԹԻԻՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻԻՆ...
Մեծ Ժողովրդականութիւն Վայելող Կլէնտելի AMGA 280-րդ Ալիքը Այժմ Կը Սփռուի GlobeCast
Արբանեակային Հեռատեսիլով Ամերիկայի, Գանատայի եւ Մեքսիկոյի Ամբողջ Տարածքին
Դուք Կրնաք Դիտել Հայաստանեան Լուրեր - Քաղաքական Վերածնունդի Անդամներ - Եւ այլն
Մանրամասնութիւններու Համար Հեռաձայնել 818.547.9696



2

alltime **armenian** favorites

KOHAR

Symphony Orchestra and Choir

HP-AD08-12E



www.hayasa.us